

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՅԸ.

Ամէն անգամ, երբ Հայ ժողովրդի զլին տառապանքի ամպերն են կուտակուում ու հորիզոնը մթազնում, Հայ ժողովուրդը իւր ամբողջութեամբ, նրա գործիչները, աշխատաւորները իրենց հայեացքը հսկայ Արագածի ու ալեւոր Մասիսի արթուն հսկողութեան յանձնուած Մայր Աթոռին են դարձնում:

Հայ ժողովրդի Հայրապետին է յուսալից աչքը դարձնում վշտի և յուսահատութեան մատնուած ժողովուրդը և նրա Հայրապետական-Հայրական խնամք-պաշտպանութեանը դիմում:

Եւ Հայ եկեղեցու բնորեալ Պետը իւր հարազատ հօտի իւր սիրած զաւակների մխիթարութեան, քաջալերութեան, յուսադրութեան սրբազան պարտականութեան առաքելութիւնն է յանձն առնում. հովուական այցի ելնում իւր զգաստացնող խօսքին, իւր յոյս և կենսունակ ոյժ ներշնչող քարոզին ակնկալող հօտին:

Այս անգամ էլ նորին Վեհափառութիւնը այդ հովուապետական այցն արաւ՝ շնայելով ամառային շոգերի և ճանապարհի բազմապիսի դժուարութիւններին:

Պետք էր Մայր Աթոռում լինել տեսնելու այն վեհ, պատմական խորհրդաւոր բազէն, երբ նորին Ս. Օծութիւնը ժամանակաւոր հրաժեշտի ողջոյնն էր տալիս Միաձնաէջ Տաճարին ու Մայր Աթոռի միաբանութեան:

Վեհափառ Տէրը իջման սեղանի առաջ ծնկաչոք աղօթում էր. խորհրդաւոր ու հրաշալի բազէ. ծերունազարդ Հայրապետը հինաւուրց մեծ Սրբափայրի առաջ ծնկաչոք՝ իւր սիրասուն հօտի, իւր չարատանջ ժողովրդի դառն վիճակի բարելաւման թեթեացման աղօթքն էր կարդում լռելեայն:

Գաղտնեաց գիտակ Տիրոջը միայն յայտնի է Ազգընտիր Հայրապետի վշտալի սրտի երկնառաք աղօթքները:

Բայց դժուար չէր կարդալ Առաքելական արժանընտիր յաջորդ Հովուապետի դէմքին իւր ծանր խաչի գիտակցութեան պարզ արտայայտութիւնը:

Ի՞նչ սրտայոյզ, ջերմ զգացմունքների, ի՞նչ հոգերո՞ւղիս խորը հաւատից ծնունդ առած աղօթքներ էին ալեկոծում Սրբիւն Հովուապետի հայրական քնքոյշ հոգին:

Եւ ո՞վ էր այն Հայր, որն այդ բոպէին տեսնելով Օծեալ Տիրոջը Միաճնաէջ սեղանի առաջ ծնկաչոք և չզգացուէր մինչև հոգու խորքը, չըզգար խորապէս, որ Հայոց Հայրապետը հայ ժողովրդի վշտի, դառնութեան պատմական խաչն էր առել իւր հղօր ուսերին և Փրկչից կարողութիւն էր խնդրում տանելու այդ խաչը անյողդողդ ու լաւագոյն ապագայի խորը հաւատով և նոյն ջերմ սիրով դէպի իւր հօտը, ինչպէս իւր արժանաւոր նախորդները պատմական անցեալում:

Ակամայից յիշողութեան մէջ վերակենդանանում են մեր մեծայարգ Հայրապետների նման հովուական այցերը, երբ ժողովրդին հայտած ահաւելի դժբախտութեան, թշուառութեան առաջը պէտք է առնել և իբրև Հայր հանուրց իւր թեկերը տարածել տառապող հօտի վերայ:

Սրտառուչ էր տեսարանը և ամեն ոք կարդում էր Աստուածընտիր Հայրապետի դէմքին նրա հայրական քնքոյշ սրտի, տառապող հոգու և ս. Լուսաւորչի Ազգընտիր յաջորդի խորը հաւատը:

Հայ ժողովրդի այս մեծ ճգնաժամին խորհրդաւոր պատմական բոպէ էր և այդ վեհ բոպէին:

* * *

Ազգիս Վեհ. Հայրապետը անցեալ յունիս 25-ին, պաշտօնական դործերով, մի ճանապարհորդութիւն յանձն առաւ Մայր Աթոռից — Տփլիսի: Չնայելով ամառային այս ջերմոտ օդ ու օրերին, ծերունազարդ Հայրապետը սիրով կատարելու ելաւ այդ ճանապարհորդութիւնը, որ իւր

Հօտի տարազրեալ ու վշտացած մի մեծ մասի դժուարութիւնները թեթեացնելու նպատակն ունէր: Հայոց Հայրապետների համար առաջինը չէր այսպիսի ճանապարհորդութիւնը, որ իրենց հաւատացած Հօտի վիճակի թեթեւութիւնը պիտի բերէր և ներկայ Հայրապետն ևս առանց վարանելու, սիրով յանձն առաւ այն:

Մայր Աթոռից ելնելուց առաջ, հերթական գործերի ղեկավարութիւնը յանձնել հաճեց Սինօղի աւագ-անդամ Դեր. Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին առանձին կոնդակով իւր պատուէրներն ու հրահանգները տալով:

* * *

Յունիսի 25-ի առաւօտեան ամենքը պատրաստ էին Հայրապետին ճանապարհ ձգելու դէպի կայարան:

Մ. Տաճարի «երրորդի» զանգը ամենքին հրաւէր կարգալով ժողովուիլ, միաբանութեան ուխտը ժողովուեցաւ վեհարանի դրան առաջ, եպիսկոպոսական դասը և Սինօղի անդամները վեհարան ելան՝ Հայրապետին դէպի Տաճար առաջնորդելու:

Դուրսը՝ Տաճարի առաջ տեղական ժողովրդի դաղթականութեան և շրջակայքից եկած հայութեան մի ստուար բաղմութիւն սպասում էր վեհի ելնելուն: Վեհարանի դարասից մինչև տաճարի դուռը երկշար կանգնել էին ճեմարանի աշակերտութիւնը՝ իրենց դաստիարակներով, Մ. Աթոռի հովանին վայելող «Սրբանոցի» փոքրիկները, իրենց կառավարչուհիների և ղեկավարների հսկողութեամբ:

Ուղիղ ժամը 10¹/₂-ին Ն. Սրբութեան Դիւանապետի ազգարարութեամբ վեհարան ժողոված եպիսկոպոսական դասը ընդառաջեց Ն. Սրբութեան և միաբանութեան ուղեկցութեամբ առաջնորդեց Հայրապետին դէպի Մ. Տաճար: Ն. Սրբութիւնը օրհնելով աջ և ձախ կանգնած բաղմութիւնը, որբերի և ճեմարանի աշակերտների երկշար շղթայի միջով յամրաքայլ մտաւ Մայր Տաճար: Ս. իջման տեղանի առաջ, վեհափառ Հայրապետը ծունկի դալով իւր աղօթքները վերառաքեց Տիրոջ, օրհնելու իւր ուղին:

յաջողելու այն գործը, որի համար մեկնում էր իւր Աթոռից: Աղօթքով զօրացած Հայրապետը ելնելով Մ. Տաճարից, մինչ այդ լուռ ժողովրդեան «կեցցէ»ներին, զանգակների զօղանջիւնի սւղեկցութեամբ Տրդատեան դարբասից դուրս գալով զիմեց գէպի զլխաւոր մուտքը: Ամենքին իւր հրաժեշտի օրհնութիւնը տալով, միաբանութեան զիմելով՝ թէ «Աղօթեցէք ինձ համար, աղօթեցէք գործի յաջողութեան համար», նստեց Հայրապետական կառքը:

Մինչև դարբաս ուղեկցում էին Սինօղի գատախաղ պ. ֆ. կ. Մելիք-Օհանջանեան, Երեանի քաղաքագլուխ Ս. Խաչատրեան, Սինօղի ծառայողները, տեղական աստիճանաւորները, շրջակայ զիւղերից եկած և տեղական տանուտէրները:

Ն. Վեհափառութեան կառքի առաջից գնում էին էջմիածնի գաւառապետ Լ. Լ. Լեւմեքման իւր պահակներով, որոնք շրջապատել էին Ն. Սրբութեան փակ կառքը:

Նորին Սրբութեան ուղեկցում էին մինչև կայարան Գեր. Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս՝ Սինօղի աւագ անդամ, Տ. Անանիա արքեպիսկոպոս՝ Մ. Տաճարի աւագ-լուսարար, Տ. Մատթէոս եպիսկոպոս՝ անդամ Սինօղի, Տ. Սահակ վարդապետ Ամատունի՝ անդամ Սինօղի և Ճեմարանի տեսուչ Տ. Դարեգին Տ. վարդապետ:

Ն. Սրբութեան շքախմբի անդամներն էին կազմում Գեր. Տ. Խորէն եպիսկոպոս՝ Փոխ-թեմակալ Երեանի, Տ. Ներսէս եպիսկոպոս՝ առաջնորդ Ատրպատականի, Տ. Տիրայր Տ. վարդապետ, Դիւանապետ Ն. Սրբութեան և անդամ Սինօղի, Տ. Արտակ վարդապետ, Փոխանորդ Աղէքսանդրապօլի:

Ն. Վեհափառութեան ուղեկցում էին նոյնպէս Տփլիսից եկած յատուկ պատգամաւորութիւն, — Պ. Պ. Միքայէլ Յովսէփեան Այրամեան, Մնացական Յովհաննիսեան Խուշունց, Յարութիւն Ստեփանեան Փիրալեան և Անտոն Նիկ. Քալանթարեան, որոնք եկած էին յատուկ առաքելութեամբ:

խնդրելու ն. Վեհափառութեան հաճել ընդունել Տփլիսի Հայ հասարակութեան կողմից իրենց որդիական հիւրընկալութիւնը որչափ ժամանակ կհաճի մնալ Տփլիսում:

Պատգամաւորութիւնը ժամանեց Մ. Աթոռ յունիս 24-ի երեկոյեան ն. Վեհափառութեան կողմից Հայրապետական Դիւանապետը բարի Կալուստ մաղթելով խնդրեց հանգստանալ այդ երեկոյ:

Ն. Սրբութիւնը հաճեցաւ ընդունել պատգամաւորութիւնը հետեւեալ առաւօտեան ժամը 9¹/₂ ինչ իւր Գոհունակութիւնը յայտնեց նոցա տեսնելու շնորհակալութիւնը՝ նոցա առաքելութեան համար և օրհնութիւնը տուեց Տփլիսի Հայ համայնքին:



Էջմիածնի երկաթուղու կայարանում ն. Սրբութիւնն առաջնորդուեցաւ իւր համար յատուկ պատրաստուած բաժանմունքը — սալօն-փաղոն՝ որ ուղարկուած էր նախորդ երեկոյեան Տփլիսից:

Ն. Վեհափառութիւնը իւր օրհնութիւնը շնորհեց միարանութեան ուղեկցող անդամներին և ժամը 1¹/₂ ին գնացքը շարժուեցաւ:



Զնայելով ցերեկուայ տօթին բոլոր կայարաններում շրջակայ հայ գիւղերից ժողովուած բազմութիւնն սպասում էր Վեհ. Հայրապետի ժամանելուն:

«Սարգսրապատ» կայարանում ն. Սրբութեան դիմաւորեցին քահանայական դասը, տեղական ժողովուրդը և Մոսկուայի Յանձնաժողովի ջանքերով Ղուրդուղուլի գիւղում պահպանուող Հիւանդանոցի ամբողջ կազմը, զլուխ ունենալով բժշկուհի օր. Կ. Զալեանին և որբանոցի վարչութիւնը:

«Ալադեւազ» կայարանում Հայրապետին ընդառաջ էր եկել Աղեքսանդրապօլի հայութեան կողմից պատգամաւորութիւնը, զլուխ ունենալով Խաչվանքեան Տ. Յակոբ

քահանային, ընկերակցութեամբ պ. պ. Սաղաթիլ Թարախեանի և Գէորգ Միքայէլեանի: Պատգամաւորութիւնը շնորհաւորելով Վեհ. Հայրապետի մուտքն Աղէքսանդրապօլի վիճակը, Նորա օրհնութիւնը խնդրեց Իւր հօտի վերայ, միաժամանակ յայտնելով և այն ջերմ ցանկութիւնը, որ ունի Հայ համայնքն Աղէքսանդրապօլի, տեսնել Հայոց Հայրապետին իւր մէջ:

Գնացքը հասաւ Աղէքսանդրապօլ երեկ. ժամը 8-ին: Գնացքի մէջ շնորհաբեր դալուստ մաղթեց քաղաքի կողմից՝ քաղաքագլուխ Կ. Պ. Կամսարական, քաղաքային վարչութեան անդամների զլուխ անցած: Ապա ներկայացան Ն. Սրբութեան քաղաքի բերդապահը, գաւառապետը, հիւանդանոցների և այլ հաստատութիւնների ներկայացուցիչները:

Գուրար սպասող անհամար ժողովրդի «կեցցէ»ների ձայնի վերայ Վեհ. Հայրապետը բարեհաճեց գնացքի լուսամուտից օրհնել Իւր ժողովրդին: Այնուհետեւ ոմանք մօտն գնացքը ժողովրդի կողմից Հայրապետի աջն առնելու և դա նշան դարձաւ, որ օրհնութեան եկօյների շարքը ուխտագնացութեան փոխարկուէր մինչև գնացքի շարժուելը: Հայրապետը սիրով ընդունում էր ամենքին և Իւր օրհնութիւնը բաշխում ամէն հասակի և սեռի ներկայացուցիչներին:

Աղէքսանդրապօլի համայնքը ճոխ սեղան էր պատրաստած Ն. Սրբութեան և Նորա շքախմբի համար կայարանի դահլիճում: Սեղանին մասնակցեցան շքախմբի անդամներից ոմանք, միւսները Հայրապետի մօտ մնալով:

Գնացքը շարժուեցաւ ժամը 9 1/2-ին: Ժողովրդի սրտանց «կեցցէ»ների և Հայրապետական հոգու խորքից բղխած օրհնութիւնների միացած սրտաշարժ տեսարանի առաջ:

* * *

Ուշ գիշերը, ժամը 1 ից անց, «Ղարաքիլիսա» կայարանում ժողովուրդը անհամբեր սպասում էր Հայրապետական գնացքին: Գնացքի մօտենալու ժամանակ «կեց-

ցէաների բարձրագոյն ձայները մի ակնթաթում իջան, հերթապահ շքախմբի անդամի յայտարարութեամբ, թէ «ն. Սրբութիւնը հանդստանում է»։ Ժողովրդական բունն ցոյցերը իրենց հանդիստը գտան այն գիտակցութեամբ, թէ ննջող Հայրապետի հանգիստը կարեւոր է և այն յուսով, թէ իրենք վերադարձին կարժանանան ն. Սրբութեան օրհնութիւնն ստանալու։

Գնացքը շարժուեցաւ լուռ հանգիստորութեամբ, մեծ յարգանքի զգացումով համակուած ժողովրդի միջով։

* * *

«Սանահին» կայարանում ն. Սրբութեան ընդառաջ էր եկած Տփլիսի թեմի առաջնորդ Գեր. Տ. Մեսրոպ եպիսկոպոսը, իւր թեմի այդ շրջանի գործակալների և ամբողջ քահանայութեան հետ։

Քահանայական դասը փիլոնով զիմաւորելով մօտեցող զնացքին, ցանկութիւն ունէր ներկայանալ իւր Հովուապետին և նորա օրհնութիւնն ստանալ, սակայն անդեկանալով, որ ն. Սրբութիւնը հանդստանում է, իւր լուռ աղօթքների մրմունջներով ճանապարհ դրեց շարժուող զնացքը, Հայրապետին ոյժ մաղթելով իւր առաքելութեան համար։

* * *

«Նաւթլուզ» կայարանում Հայրապետական զնացքը կանգ առաւ առ. ժամը 7, 40 րոպէին, ըստ կանխորոշ ուղեգծի, որպէսզի ճիշդ ժամանակին կարողանար մտնել Տփլիս։

Ն. Սրբութեան ներկայացան այստեղ Գանձակի յաջորդ Տ. Լևոն վարդապետ, որ եկել էր ն. Սրբութեան, ապա քաղաքային վարչութեան նախկին անդամ իշխան Նիկ. Եգ. Արղութեան—երկայնաբազուկ, զնդապետ Աղ. Գ. Սուրէնեան և ուրիշներ։

* * *

Ժամը ուղիղ 10-ին Հայրապետական զնացքը կանգ առաւ Տփլիսի կայարանի զարդարուն կամարակապի տակ, Արքայական դահլիճի ճիշդ դռան մօտ։

Մինչև զնացքի ժամանելը Ն. Սրբութեան դիմաւորելու համար ժողովուած էին Ն. Կ. Բ. Տ. Փոխարքայի ղինուորական մասի օգնական ինֆանտերիայի զենեքալ Ն. Ն. Եանուշկեիչ, քաղաքացիական մասի օգնական Գեն. -լէյտ., իշխան Վ. Ն. Օրլով, Կովկասեան ղինուորական շրջանի պետ. Գեն. -լէյտ., Ս. Վ. Վօլ'սկիյ, զաղթականական զործերի ղլխաւոր ղեկավար Գեն. -մայ., Վ. Մ. Թամամշեան, Կովկասեան ղինուորական հաղորդակցութեան պետ Գ. -մ. Վ. Կ. Կարպով, Կովկասեան երկաթուղիների ղլխաւոր կառավարիչ Գ. -մ. Վ. Ա. Վասիլևսկիյ, Տփլիսի նահանգապետ՝ Ֆլիգ. ադիւտ. Ա. Ն. Մանդրիկա, փոխ-նահանգապետ՝ սենեկապան՝ Ե. Ն. Պանով, Փոխարքայի Դիւանատան Կառավարչի պաշտօնակատար Կօլօգրիվով, Վրաստանի էքզարխ Պլատոն արքեպիսկոպոսի կողմից իբրև ներկայացուցիչներ՝ նազարիյ վարդապետ, Քրւաշվէտի ս. Գէորգ եկեղեցու աւագ-երէց, հ. Կ. աւագ քահանայ Յինցաձէ, և Սիօնի Մ. Տաճարի աւագ-երէց. հ. Ն. քահանայ Թքեմալաձէ, Տփլիսի քաղաքաղուխ Աղ. Ի. Խատիսեան, քաղաքային վարչութեան անդամներ՝ Մ. Ա. Զաքարի և Գ. Դ. Ժուրուլի, քաղաքային ձայնաւորների հետ, Լոնդոնի Լորդ-մէրի հայ զաղթականների նպատուիչ դրամագլխի ներկայացուցիչ պատուելի հարուրդ Բաքըստըն, Ամերիկայի հայութեան բարեկամներին ներկայացուցիչ պատուելի Ֆ. Մըկ-Ալլում, Ամերիկացի բարոգիչ մ. Բ Ստիպելտըն, Կովկասեան բարեգործական խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեան, Աղ. Մելիք-Ազարեան, բժկպտ. Բ. Նաւասարդեան, «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեան, վաճառականների աւագի պաշտօնակատար Ս. Գ. Կաֆեան, Խ. Աֆրիկեան, վաճառականների ներկայացուցիչների հետ, մէշչանների աւագ Վ. Ի. Առաքելեան, արհեստաւորների ղլուխ Յ. Ի. Բարսեղեան, Հայ հասարակութեան ակնյայտնի անկիւններ, օրիորդներ ևլն՝:

Մի կողմն առանձին տեղ էին բռնած հայ հոգեւորականութեան ներկայացուցիչները, իսկ Ն. Սրբութեան ելքի սանդուղտների առաջ «Հրատապ Սփոփանքի» որբերն ու ապաստան դտածները:

Ն. Վեհափառութիւնը ուղիղ 10 ժամ, 20 բոպէին ելաւ սալոն-փագոնից, որին դիմաւորեց ժողովրդի սրտանց շնորհներէն երի ձայները:

Ն. Վեհափառութեան, երկաթուղու կամարակապի տակ, Արքայական սենեակներէ մուտքի առաջ շնորհաբեր այցելութեան առաջին խօսքն արտասանեց Ն. Կ. Բ. Տ. Փոխարքայի զինուորական մասի օգնական ինժեանտ. Գեն. Ն. Ն. Եանուշկեիչ Ն. Կ. Բարձրութեան կողմից: Վեհափառ Հայրապետը օրհնելով Մեծ. Իշխանին, խնդրեցիւր շնորհակալութիւնը յայտնել Օգոստոսփառ Փոխարքային: Ապա մօտեցան, օրհնութիւն և Աջ առնելով շնորհաբեր գալուստ ցանկացան Տ. Փոխարքայի քաղաքական մասի օգնական գեներալ-լէյտենանտ Իշխան Վ. Ն. Օրլովի Վրաստանի Էքզարխի կողմից՝ Նազարիյ վարդապետը, քաղաքի կողմից՝ քաղաքապետ Ս. Բ. Խատիսեան:

Անցնելով Արքայական սենեակները, Ն. Սրբութեան գալուստը շնորհաւորեց Հայոց Բարեգործ. Ընկ. Նախագահ Ս. Յարութիւնեան, հետեւեալն ասելով.

«Ձերդ Սրբութիւն, Տփլիսի Հայ ազգաբնակչութեան բոլոր խաւերի ինչպէս Հայ զանազան կազմակերպութիւնների, ներկայացուցիչները, զուլս խոնարհելով Ձերդ Վեհափառ Տէրութեան առաջ, որդիական ամենաջերմ զգացումներէ սիրով են շնորհաւորում Ձեր շնորհաբեր գալուստը Մեզ մօտ: Մենք, ամենքս ևս անխտիր, համակուած ենք հիացման և խորին երախտագիտութեան զգացումով Դէպի Ձեզ, Հայ եկեղեցու Գլուխ ու Հովուապետը, որ անտես առնելով ամառային այս տապ օրերի դժուարութիւնները, մէկ կողմ գնելով ճանապարհորդութեան նեղութիւնները, վճռեցիք այցի ելնել Ձեր սիրեցեալ և Ձեզ սիրող Հօտին: Միայն անկեղծ սէրն է, Վեհափառ Տէր, որ տաճում էք դէպի Ձեր Հօտը, մանաւանդ այս դառնաղէտ օրերին տառապող Տաճկահայ Ձեր որդիների զլիսին եկած փորձութիւններն է, որ ի նկատի էք առած և այն հայրական խնամածու հոգածութիւնը, որ միշտ ունեցել էք և ունիք նոցա նկատմամբ, զորա—կարող էին զրդել Ձեզ սիրով յանձն առնել

այս նեղսահիր ճանապարհորդութիւնը: Մեր յոյսը մեր հաւատը դեռ շատ մեծ է այն նկատմամբ, թէ Մեծն Ռուսիոյ, ինչպէս և նորա հզօր դաշնակիցների հովանաւորութիւնն ու պաշտպանութիւնը Հայերին՝ արժանապէս վարձահատոյց կլինին այն անհամար զոհաբերութիւնների և զոհերի համար, որ արիւնաքամ Հայութիւնը տուեց: Մենք զօրեղ հաւատ ունենք, որ Ձեր հոգածու սիրտը, Վեհափառ Տէր, այսքան ծանր հարուածներից, թշուառութիւն ու աղէտներից յետոյ, զոհացում կատանայ և Դուք ահանաւոր կլինիք մեր ցեղի լաւագոյն ապրումների օրերին:

Կրկին ողջոյն Վեհ. Հօրդ, մեր ջերմ ցանկութիւնների և ըղձերի հետ, որ Տիրոջ օրհնութեամբ ընդգրկած առաքելութիւնը յաջողութեամբ պսակուի:

Կեցցէ՛ ն. Սրբութիւն, Վեհ. Հայրապետն ամենայն Հայոց:

Վեհափառ Հայրապետը իւր շնորհակալութիւնն արտայայտելով իւր շուրջը բոլորած հայութեան բոլոր ներկայացուցիչներին նոցա բարի և սրտանց ցանկութիւնների համար, հաճութիւն յայտնեց բուն պատասխանը տալ Տաճարում՝ բեմից:

Արքայական դահլիճից Վեհափառ Հայրապետը առաջնորդուեցաւ կայսրանի ելքը: Ամբողջ հրապարակը լիքն էր ժողովրդի խուռն բազմութեամբ: «Կեցցէ՛»ների ձայները օդն էին լցնում: Ն. Վեհափառութիւնը օրհնելով բազմամբոխ ժողովրդին, իւր յատուկ կառքը նստեց, որ լծուած էր երեք-չոյգ ձիերով: Կարմրազգեստ «Շաթիր»ները տեղ բռնեցին կառքի յետևում ձեռքերին ունենալով իրենց արձաթաղուիս գաւազանները:

Թափուրը շարժուեցաւ: Առջևից դնում էր ոստիկանապետը՝ գնդապետ Ս. Ա. Զդանովսկիյ, ապա ընդունելութեան Յանձնաժողովի նախագահ Տ. Նազարեան, նորա յետևից Վեհ. Հայրապետի Դիւանապետ Տ. Տիրոյր Տ. վարդապետ, ապա Խաչ և դաւազան կրող ձիաւորուած, Յովհ. ա. քահանայ Տէր-Կրիզոբեան և հ. վարդանեան, որից յետոյ, որոշ տարածութեան վերայ դալիս էր Հայրապետական կառքը:

ապա հետեւում էին Գեն. ինՖ. Ն. Ն. Եանուշկեիչի, Գեն. Էյտ. իշխան Օրլովի ինքնաշարժերը, որից յետոյ Ն. Վեհափառութեան շքախմբի անդամների կառքերը. դոցանից յետոյ պաշտօնական անձերի, զինուորականների, պատուաւոր քաղաքացիների, ընկերութիւնների, հաստատութիւնների ներկայացուցիչների և միւսների կառքերի անվերջ շարքը։ Այդ երկար թափօրը յամրաքայլ անցնում էր երկշար կանգնած, Վեցցէսներ կանչող ժողովրդի անվերջ շարանների, միջով հետեւելով Վօզդայնայա, Ելիզաւետինսկայա փողոցներով։ Միքայէլեան պողոտայով, անցնելով Նիկոլաեսկից կամուրջը և հասնելով մինչև Աղէքսանդրեան այգու զիմացը։

Թափօրի ամբողջ գնացքը առաջ անցնելով իւր հետ տանում էր և հետզհետէ ծովացող ժողովրդին՝ ամէն հասակի ու սեռի։

Տօնական օրը, Կիւրակէն, առաւել ևս մեծ առիթ էր ընձեռում թափօրի շքին և վայելչութեան։ Տների պատրշդամբները ծածկուած էին դորդերով, ծաղիկներով և միջօրէական շքեղ բոյսերով։ Իսկ այդ ամենի միջից ժողովուրդը գլուխ էր իջեցնում իրենց օրհնող Հայրապետի առաջ։

* * *

Աղէքսանդրեան այգու առաջ սպասում էր Հայ հոգեւորականութիւնը՝ գլուխ ունենալով իւր առաջնորդին, Տ. Մեսրոպ Եպիսկոպոսին, որ կայարանից շտապել էր կողմնակի փողոցներով գալ և հոգեւորականութեան գլուխ կանգնել։

Ն. Վեհափառութիւնը բարեհաճեց իջնել կառքից Վօնդոնի, հիւրանոցի անկիւնում և մտնել Հայրապետական ամպհովանու տակ, առնելով վրան ծանրագին շուրջառ։ Վաղօրօք ամպհովանին կրելու համար պատրաստ էին,— Գեն. մայ. Մ. Դ. Դօլուխանեան, Մ. Ի. Դօլուխանեան, Աղ. Ա. Մելիք-Աղարեան, բժշկա. Բ. Նաւասարդեան, քաղաքագլուխ Աղ. Ի. Խատիսեան, պրոֆեսոր

Վարդ, Վարդանեան, վաճառականաց պետի պաշտօնակատար Ս. Գ. Կաֆեան, որոնք փոխ առ փոխ կրում էին ամպհովանին:

Ժողովրդին օհնելով յամրաքայլ առաջ անցաւ Վեհ. Հայրապետը, տասնեակ հազարաւոր զուխների միջով, որոնց աչքերը ուրախութեան բոցով էին փայլում: Առաջից գնում էին երկու զգեստաւորուած քահանայ՝ կրելով Հայրապետական քօղը, նոցա առաջ չորս բուրվառակիր, որ շարունակ խնկարկում էին Հայրապետին, ապա քահանայական ամբողջ դասը շուրջառազգեստ, կոյսերի խումբն իրենց սպիտակազարդ քօղերով, երգիչների խումբը «Հրաշափառի» ձայնակցութիւններով, Հայ դպրոցների աշակերտ-աշակերտուհիների անձայր, շարքերը, որբանոցների որբիկները և անվերջ, անվերջ ժողովուրդ:

Վանքի դռան առաջ մի բոպէ ժողովրդի բուռն թափի տակ, կարծէք, կարգը պիտի խանգարուէր, սակայն բոպէի վեհութիւնը գերակշիռ հանդիսացաւ յոյզերից և սիրոյ արտայայտութիւններից և թափօրն ամենայն հանդիսաւորութեամբ մտաւ վանքի աւագ եկեղեցու լայնարձակ բակը, ուր ժողովրդի մի ծով էր գիզացած:

Վեհ. Հայրապետը մտաւ Մ. Եկեղեցին «Ուրախ լեր»ի խրոխտ շէշտերի տակ, արտասանեց «Ուրախ եղէ ես» սաղմօսը, «Պահպանիչով» օրհնեց ներսը գտնուած ժողովրդին և առաջնորդուեցաւ դէպի Վեհարան, մի փոքր հանգիստ առնելու:

Վեհարանի սանդուղտների գլխին, որ զարդարուած էր կարմիր մահուդ փռոցքով, արեւադարձային շքեղ բուսականութեամբ, ծերունազարդ Հայրապետը դարձաւ Իւր օրհնութիւնը բաշխելու վանքի բակում ծովացած Իւր Հօտին: «Կեցցէ»ները առ բոպէ լուեցին և թաղաւորող լուութեան մէջ Հայրապետը Իւր «Պահպանիչ»ով օրհնելով ժողովրդին, ներս մտաւ Վեհարանի դահլիճը և Հայրապետական Գահ բազմեց:

«Մշակ» լրագրի խմբագիր պ. Առաքելեան՝ շնորհաբեր գալուստ մաղթեց Հայրապետին, արտասանելով. —

«Ձերդ Սրբութիւն, Տփիսիսի Հայ կաղմակերպութիւններին, հաստատութիւններին և ընկերութիւններին կողմից՝ ինչպէս և այստեղ, Ձերդ Վեհափառութեան շուրջը բոլորած բոլոր հասարակական ներկայացուցիչների և անհատների կողմից, պատիւ ունիմ որդիական անկեղծ սիրոյ զգացումներով շնորհաւորել Ս. Հովուապետ՝ Հայ Եկեղեցու Պետիզ, շնորհարեր գալուստը Տփիսիս:

Հայ Եկեղեցին, որի հօտապետն էք Դուք, Հայ ժողովուրդը, որի ներկայացուցիչն է Ձերդ Սրբութիւնը, Հայաստանը, որի մարմնացումն է Ձերդ Վեհափառութիւնը այս ծանր ու աղետալի օրերին, օտարների խի վկայութեամբ այս պատմական բոպէներին, ողջունում է Ձեզ ի սրտէ և անկեղծօրէն: Դուք էք, որ և՛ պատկերացնում և՛ մարմնացնում էք Հայի ըղձերը, սպասելիքներն ու անկաւիքը: Դուք, իբրև ազգընտիր Հովուապետ՝ Հայաստանի անձնաւորումն էք կենդրոնացնում Ձեր մէջ, այն Հայաստանի, որ արիւնքամ, ջլատուած ու բզկթուած, աւերակ ու լքուած, արիւնաշաղախ և քարազիր հեծում է բազդի դառն հարուածի տակ: Սակայն, Վեհափառ Տէր, յուսահատութեան ոգին չէ՛, որ սաւառնում է այս բոպէիս ամենքիս վերայ, վհատութիւնը չէ՛, որ պատել է մեր սրտերը և մեր հոգին, և այդ զգացումները չէ՛, որ Հայոյ Հայրապետի Դահլիճի շուրջն է բոլորել ամենքիս՝ անխորի: Մենք, ամենքս, զօրեղ և աներկրայ հաւատ ունինք, որ Հայ աշխարհը՝ թէև լքուած ու աւեր, թէև գիշատուած ու արիւնքամ, մի օր պիտի կանգնէ, օտքի ելնէ, յարութիւն առնէ: Եւ թող Ձերդ Վեհափառութիւնը անյողողող հաւատացած լինի, Դուք, որ եկել էք այստեղ, Հայաստանի վերակենդանութեան և վերածնութեան նպատելու գործը կոելու, հաւատացած եղէք, որ հեռու չէ այն օրը, երբ այս ամենը իրականութիւն կտանայ, մարմին կզգենու: Ձեր բոլոր գործերի, հոգածութեանց և խոհերի ընթացքում Ձեզ հետ է և Ձեզ հետ կլինի Հայ ժողովուրդը: Ձեզ հետ է Հայ ժողովուրդը, Վեհափառ Տէր, հաճեցէք օրհնել այդ ժողովրդին, որ սրաատրուփ սպասում

է Զեր շնորհարեր դալստեան բարի հետեանքներին»:

Վեհափառ Հայրապետը օրհնեց իւր շուրջը հաւաքուած ժողովրդին, անցաւ ներքին սենեակները, հանդստանալու փոքր ինչ և եկեղեցի իջնելու:

* * *

Կէս ժամից յետոյ Վեհ. Հայրապետը հոգևորական դասի, առաջնորդի, իւր շքախմբի անդամների ուղեկցութեամբ բարեհաճեց իջնել Տաճար վեհարանից, անցնելով աշակերտ-աշակերտութիւնների, որբերի և հեազհետէ բաղմացող ժողովրդի երկշար կենդանի պատի միջով, աջ և ձախ Հայրապետական օրհնութիւնն բաշխելով:

Պատարագին, «Հայր մեր»-ից առաջ նորին Սրբութիւնը հաճեց սեղան բարձրանալ, Գահ նստել և ժողովրդին դիմելով յայտնեց այն բղձերը, որոնք պատճառ են եղել իրեն Տփլիս ժամանելուն:

Ն. Սրբութիւնը յայտնեց, որ տարիներ առաջ, երբ 1914 թուին այցելեց Տփլիսը, պարագաները, հանգամանքներն ու ժամանակը բոլորովին այլ էին. բաղդաւոր օրեր էին այն օրերը, երբ ամենքը լցուած էին լաւագոյն յոյսերի ու տենչանքների զգացումներով, երբ ապագան այնքան յուսալից էր և խոստմնաբեր: Սակայն այսօր պարագաներն այլ են. ամեն ինչ փոխուած է. լքումի դրոշմն է, որ կրում է ամեն ինչ. դառնութեան օրերը իրար յաջորդեցին, արեան գետերն իրար հետ մրցեցին Հայն ու Հայութիւնն իրենց մէջ խեղդելու, չքացնելու և անէացնելու համար. Հայի դաշտերն ու լեռները արիւնով են լուացուած, Հայի սիրտը արիւն է ծորում. Հայի արցունքն անհատնում, նորա բունն աւեր ու կործան, տաճարները քանդուած ու ապականուած, Հայութիւնը տարակիր օտար երկնքի տակ, մի անհիւրընկալ աշխարհ, որ վերեւից կրակ է թափում Հայի գլխին, իսկ ներքեւից՝ աւազուտները նորամարմինն այրում, հողին քաղում, աւերող ձեռքի պակասը լրացնելու և կործանման դրոշմը կատարեալ դարձնելու համար:

Հայութեան մի խեղճ բաժին, վշտի ու արցունքի մէջ շաղախուած, եկաւ ապաստան գտնելու իւր արիւնհակիցների մօտ: Հայութեան սիրտը Մ. Աթոռը տեսաւ իւր զաւակների օրհասի օրերը, որ քամուամ էր վերջին մնացորդների աչք ու հոգուց, և նա պատասպարեց, խնամեց, գուրգուրաց այդ մնացորդների վերայ, որովհետեւ Մ. Աթոռը միշտ հարազատ Մայր է եղած իւր զաւակներին, թշուառութեան օրերին հոգատար, յուսահատութեան բոպէներին՝ յուսատու, լքման վայրկեանին ներշնչող նորա ոգու և գիտակցութեան մէջ ապրելու մեծ գաղտնիքը, նորից կանգնելու և նոր ի նոր վերաշինելու հայրենի ժառանգութեան աւերը:

Սակայն ինչպէս կարող է հայութեան Հօր սիրտն անտարբեր մնալ իւր ապարադդ զաւակների, իւր ցրուած, տանջուող, ապրումների ու մահուան մէջ մաքառող որդիների վերջին ջղաձիգ դաւարումները տեսնելով և օրհնութեան ձեռք մեկնելուց յետոյ կենալու:

Հայութիւնը անհետ կորցնելու հարուածը չափազանց ուժգին էր, հայութեան վերքը չափազանց խոր, սպեղանին չափազանց անբաւարար, ուստի և ինքը, չնայելով իւր տարիքին և տարուայ եղանակի անյարմարութիւններին Տիրոջ անհուն ողորմութեան յուսադիր՝ եկել է բաղխելու հայութեան մնացորդներին ասպնջականութիւն տուող, գթասրտութեան մեծ գործը ղեկավարող աշխարհիս հօրերի գուռը, որպէսզի իւր հօտի ցաւերը պատմէ և ամոքելու դարման խնդրէ, բժշկութեան դեղ հոգայ ու այդ վերքերի բուժիչ սպեղանին տանէ իւր հետ:

Էջմիածնում և շուրջը ապաստան գտած գաղթականութեան ծանր ու դառն վիճակը նկարագրելով, Վեհափառ քարոզիչը ընդգծեց այն մեծ դերը, որ կատարել էր Էջմիածնի Եղբայրական Օգնութիւնը իւր բազմաթիւ ճիւղերով, թէ Մ. Աթոռի մէջ, թէ Երեւանում և թէ ամենայն տեղ, ուր գաղթականութեան հոսանքն էր հասնում իւր ծով կարիքներով և սփոփանքի ու խնամքի կարօտ հոգով ու մարմնով: Եւ երբ գաղթականութիւնը սփռուե-

ցաւ Կովկասեան Հայութեան զանազան վայրերը, մեր խեղճ ու ինքն ևս կարօտութիւնը ճաշակած պատուական զիւղացիութիւնն էր: որ պատուով կրեց այդ ծանր բեռան դժուարութեան մեծ մասը և պատուով ելաւ իւր բարոյական պարտիքը կատարելու քրիստոնէական, մարդասիրական ու եղբայրական մեծ գործից: Հայութեան միջուկը և ոյժը կազմող մեր պարծանք զիւղացիութիւնը ցոյց տուեց, որ Հայի մէջ դեռ կենդանի է սիրտն ու հոգին և կարեկցութեան ու պարտաւորութեան զգացումը: Իւր վերջին ցամաք հացը, իւր նեղլիկ խրճիթը լայնսիրտ հոգով նա բաժանեց իւր ամեն ինչ կորցրած եղբօր և քրոջ հետ:—Ոչ պակաս սիրով ու խնամածութեամբ վերաբերեց նաև Հայութեան միջին դասակարգը տառապանքի ու վշտի այդ օրերին իւր ապա-բազդ ազգակիցներին: Ս. Էջմիածնի եղբ. Օգնութեան սնդուկը արհեստաւոր, աշխատաւոր, միջին վաճառականի և առ հասարակ միջին դասակարգի լուսմայով էր, որ կեանք էր ստանում և կեանք սփռում մեռնող Հայութեան վե-րայ: Մինչև այսօր իսկ, յարեց Ն. Սրբութիւնը. Ամերի-կայի աշխատաւոր դասի լուսման է, որ կենդանութիւն է շնորհում այդ սուրբ գործին:—Դժբաղդաբար, նկատեց Ն. Սրբութիւնը, մեր այն դասակարգը, որից ամենից աւելի պիտի յուսայինք օգնութիւն, հարուստ դասակարգը,— շատ քիչ ձեռնտուութիւն է հասցրել առհասարակ: Նոցա մէջ կան անհատներ, որոնք մէն-մենակ կարող կլինէին տալ այն ամբողջ օգնութեան չափը, որ մինչև այսօր եկած է, ասկայն սիրտը չխօսեց նոցա մէջ, միտքը բանա-ւոր խորհրդատու չեղաւ նոցա, հոգին չարթնցաւ և հա-րուստ դասակարգը յարութիւն չառաւ իւր անտարբեր վիճակից՝ յարութիւն տալու թշուառութեան մէջ խեղ-դուող Հայութեան:—Օրինակներ յիշեց, թէ ինչպէս օտար ազգութիւնների հարուստներն իրենց ամբողջ ունեցածը իւր ցեղի փրկութեան գործին են նուիրաբերում անվե-րապահ հոգով ու օրտով, և յորդորեց Հայ հարուստնե-րին օխրով ընդ առաջ գնալ թշուառութեան մատնուած իւր եղբայրակիցներին, նոյնը յիշեցնելով առհասարակ և

Հայութեան բոլոր դասակարգերին՝ շինայել իրենց ունեցածից մաս ու բաժին հանել կարօտութեան մէջ տառապողներին: Եւ այդ կարիքը դեռ շատ ու շատ մեծ է, քանի դրութիւնն այնքան ահաւոր է այս րոպէիս. ամբողջ քաղաքներ հրդեհուած, աւաններ աւերուած, զիւղեր հիմնայատակ, դաշտերն անհերկ, շինականն ու քաղաքացին քայքայուած, ամբողջ հայութիւնը մահուան ճիրաններում, աղատուածներն անստոյգ վիճակի մէջ, իսկ վերաշինութեան և երկրի ու տնտեսութեան վերականգման պահանջն աներկրայ: Վեհափառ Հայրապետը կոչ արեց Իւր ունկնդիրներին չմոռնալ այդ պահանջը և Իւր մինչև այժմ արած օգնութեան գործը մինչև վերջը սիրով և խնամօտ սրտով տանել և գործը պսակել վերաշինութեան հոգածութեամբ: — Աւետարանի սերմանացանի առակի յիշեցմամբ, յոյս յայտնեց, որ Իւր խօսքը կրնկնէ պարարտ հողի վերայ և կտայ առատ հունձ, որովհետև Ինքը հաւատացած է, որ Իւր առաջ կանգնած Հայ ժողովուրդը Իւր նախորդների հարազատ զաւակն է, այն ժողովրդի, որի սիրտը միշտ պարարտ դաշտ է եղել զթափարտութեան ու մարդասիրութեան գործի համար և որ այժմեան Հայութիւնն ևս առատապէս կնպաստէ կարիքը լցուցանելու րոպէին Իւր սրտանց նուիրաբերութիւններով:

Իւր քաղովի վերջը Ն. Սրբութիւնը յորդորեց Իւր հօտին մոռանալ ամէն մանր հաշիւներ, կրքերի ու անձնական հաշիւների յարդարումները մի կողմ դնել, միանալ ի մի՝ սրտով, հոգով և ձգտումներով, — հանրական ոյժով Եղբայրական Օգնութեան ձեռք կարկառել անոք, թշուառ, մուրացիկի դերում գտնուող հայութեան, որովհետև միմիայն այն հասարակութիւնն ու ազգն է յաղթող ու յառաջադիմութեան ուղիղ ճանապարհի վերայ կանգնած, որ զիտէ ամբողջութիւն է մայր բարեաց սկզբունքը:

Ժողովուրդը լսում էր Իւր Հօտապետի խօսքը մեծ ուշադրութեամբ և սիրով:

Պատարագից յետոյ Ն. Սրբութիւնը ելաւ Վեհարան, կրկին օրհնելով բակում խոնուած հազարաւոր ժողովրդին տանդուղտների զլիւից:

Նոյն օրը ժամը 1-ից քիչ անց Ն. Սրբութեան այցելութեան եկան Տփլիսի նահանգական ազնուականութեան պարագլխի անձնափոխանորդ իշխան Դ. Է. Չելոկայե, նորընտիր պարագլուխ իշխան Աբխազէյի Տփլիսից բացակայելու պատճառով — Այնուհետև ներկայացաւ գիւղացիական նահանգական Ատեանի անդամ Կ. Ա. Իւգրաշեան, Պետրոգրադի Կանանց ինստիտուտի ուսուցչապետ Վ. Վարդանեան և ուրիշները:

Ուղիղ ժամը 2-ին Վեհ. Հայրապետին այցելութեան եկաւ Կովկասեան Տ. Փոխարքայի զինուորական մասի օգնական ինժ. Գեն., Ն. Ն. Եանուշկէիչ, որ մնաց Վեհ. Հայրապետի մօտ քառորդ ժամ. Ապա այցելութեան եկաւ Տ. Փոխարքայի քաղաքական մասի օգնական իշխան Գեն.-լէյտ. Վ. Ն. Օրլով, որ մնաց Ն. Սրբութեան մօտ 25 րոպէ: Այնուհետև այցելութեան եկաւ Տփլիսի նահանգապետ Ֆլիգ.-ատիւտ. գնդապետ Մանդրեկան: Փոքր ինչ անց այցելութեան եկաւ քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեան, մեշխանների աւագ Բ. Առաքելեան:

* *
*

Յունիս 26-ի, երեկոյեան ժամը 5-ին, Ն. Սրբութիւնը այցելութեան գնաց Կովկասեան Տ. Փոխարքայ Ն. Կ. Բ. Մեծ-իշխան Նիկոլայ Նիկոլաւիչին, ընդունուած ձեռով Ս. Ռաջից գնում էր ընդունելութեան Յանձնաժողովի նախագահ Տ. Նազարեանի կառքը, ապա Խաչ և Գաւազան կրող Տ. Արտակ և Լեոն վարդապետների կառքը, ապա Հայրապետական գաւազանակիր Տ. Տիրայր ծ. վարդապետի կառքը, որին հետևում էր Ն. Սրբութեան բացկառքը, այնուհետև Տփլիսի թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի կառքը, յետոյ Տ. Խորէն և Տ. Ներսէս եպիսկոպոսների կառքը, և ապա Յանձնաժողովի միւս անդամները՝ Հ. Առաքելեանի, Յ. Մելիք-Բախտամեանի և Ս. Եսայեանի կառքերը: Շքերթն անցաւ Մեծ-վանքի և Բարեատինսկայա փողոցներով, Դօլովինսկիյ Պողատայով և կանգ առաւ Պալատի առաջ:

Վեհ. Հայրապետն անցնելով սանդուղտների վերայ երկշար կանգնած պատուաւոր պահակի խմբի միջով, առաջնորդուեց Մեծ-Իշխանի առանձնասենեակը: Հոգեւորական ուղեկիցները հրաւիրուեցան իշխան Վ. Ն. Օրլովի կողմից առանձին դահլիճ, խաչակիր և դաւաղանակիր վարդապետները մնացին ընդունելութեան դահլիճի դռան մօտ, իսկ աշխարհիկ հետեւորդները Պալատի Սպիտակ դահլիճում:

Տ. Փոխարքայի և Ն. Սրբութեան տեսակցութիւնը բոլորովին առանձնակի էր: Տեսակցութիւնը տեւեց 17 րոպէ: Ն. Կ. Բ. Մեծ Իշխանը տեսակցութիւնից յետոյ առաջնորդեց իւր ամուսնու Մեծ-Իշխանուհու՝ Անաստասիա Նիկողաւնայի բաժինը, ուր ներկայացրեց Ն. Սրբութեան իւր Օգոստափառ ամուսնուն, իւր եղբօր՝ Մեծ-Իշխան Պետր Նիկողաւիչին և նորա ամուսնուն՝ Մեծ-Իշխանուհի Միլիցա Նիկողաւնային: Վեհ. Հայրապետը մնաց Մեծ-Իշխանուհու մօտ 10 րոպէ: Ապա Ն. Սրբութիւնը օրհնելով ամենքին՝ հրաժեշտ տուեց, ելնելով Սպիտակ դահլիճը Ն. Սրբութիւնը ներկայացրեց Մեծ-Իշխանին իւր շքախմբի անդամներին և ապա կրկին օրհնելով՝ հրաժեշտ տուեց Մեծ-Իշխաններին և իշխանուհիներին: Մեծ Իշխանը ուղեկցեց Ն. Վեհափառութեան մինչև դահլիճի մուտքի դուռը:

Ն. Սրբութիւնը, իւր շքախմբի ուղեկցութեամբ, նոյն կարգով վերադարձաւ Վեհարան:

Ուղիղ ժամը 6-ին Ն. Վեհափառութեան այցելելու բարեհաճեց Կովկասեան Փոխարքայ Մեծ-Իշխան Նիկողայ Նիկողաւիչը, իւր եղբօր՝ Մեծ-Իշխան Պետր Նիկողաւիչի հետ, հերթապահ ատիւտանդ կոմս Դ. Գ. Մինգալէնի ուղեկցութեամբ և իւր պատուաւոր պահակի յիսնակի բոլորումով:

Տ. Փոխարքան և իւր Օգոստափառ եղբայրը առաջնորդուեցան Դիւանապետի կողմից Ն. Սրբութեան առանձնասենեակը, ուր մնացին շուրջ 10 րոպէ, այնուհետև Ն. Կ. Բարձրութիւնները մեկնեցին Պալատ:

Տ. Փոխարքայի ընդունելութեան ժամանակ Վեհարանի դահլիճում սպասում էր հոգեւորական դասը:

Նոյն օրը ժամը 7-ին, երեկոյեան, Ն. Սրբութեան
այցելութեան եկաւ Հրէաների Ռարբի պ. Մենդել Մար-
կուս, որ ներկայանալով Ն. Սրբութեան շնորհաբեր դա-
լուստ մաղթեց Տփլիսի Հրէայ համայնքի կողմից — Հե-
տեկալ օրը փոխ-այցելութեան զնացին Ռարբիին Տ. Ար-
տակ և Տ. Լևոն վարդապետները:

Երեկոյեան ժամը 8-ին Ն. Սրբութեան ներկայացան
ընդունելութեան Յանձնաժողովի անդամները, իրենց ամ-
բողջ կազմով, նախագահ պր. Տ. Նազարեանի առաջնոր-
դութեամբ, որոնց վեհ. Հայրապետը իւր շնորհակալիքը
յայտնեց և օրհնութիւնը շնորհեց:

* *

Յունիս 27-ին, ժամը 12-ին, Ն. Սրբութիւնը ուղե-
կցութեամբ Վրաստանի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկո-
պոսի, Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի,
Ատրպատականի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի և
իւր Դիւանապետ Տ. Տիրայր Տ. վարդապետի, ինպէս և
խաչ ու դաւազան կրող Տ. Արտակ և Տ. Լևոն վարդա-
պետների, այցելեց Վրաստանի Էքզարխ Ն. Բ. սրբազնու-
թիւն Պլատոն արքեպիսկոպոսին:

Ընդունելութեան դահլիճում, Ն. Վեհափառութեան
սպասում էին ուսու և վրացի հոգեորական դասը, ուր
ընդառաջեց և ինքը Էկզարխը:

Ն. Սրբութիւնը առաջնորդուեցաւ Էքզարխի ընդու-
նարանը, ուր և հրաւիրուեցան հետևորդ եպիսկոպոսները
և Դիւանապետը:

Այցելութիւնը տևեց մօտ 30 րոպէ:

Ժամը երկուսին Ն. Բ. Սրբազնութիւնը այցելութեան
եկաւ Ն. Սրբութեան, որին ընդունեցին հերթակալ վար-
դապետները, քահանայական դասը, Տ. Դիւանապետն առաջ-
նորդեց Սրբազան Էքզարխին Ն. Սրբութեան ընդունարան-
դահլիճը:

* *

Ժամը 2-ին, Ն. Սրբութիւնը փոխ-այցելութեան զնաց
Կովեասեան Տ. Փոխադրացի զինուորական մասի օգնական

ինք. Գեն. Ն. Ն. Եանուշկեիշին, իւր շքախմբի անդամներին ուղեկցութեամբ և այնտեղից Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Գեն. Էյտ., իշխան Վ. Ն. Օրլովին:

* * *

Յունիսի 28-ին Ն. Սրբութիւնը բարեհաճեց այցելել, ուղեկցութեամբ Տ. Մեսրոպ, Տ. Խորէն և Տ. Ներսէս եպիսկոպոսների և իւր Դիւանապետ Տ. Տիրայր ծ. վարդապետի Տփլիսի նահանգապետ Ֆլիգ. ատ. գնդապետ Ս. Ն. Մանդրեկային:

Նոյն օրը այցելեց նաև Տփլիսի ազնուականութեան պարագլխի պաշտօնակատար Կամերհեր իշխան Դ. Է. Չելոկաեին: Իշխանին այցելելու ժամին Ն. Սրբութիւնը հաճեց արտայայտել, որ ինքը այցելելով իշխանին, այց է տալիս յանձին նորա և՛ վրաց ամբողջ ազնուականութեան և վրաց ժողովրդին, որոնց ինքը վերաբերում է ամենայն համակրութեամբ և իւր օրհնութիւնն ու ողջոյններն է շնորհում նոցա ամենքին:

Իշխանը յայտնեց իւր խորին շնորհակալութիւնն այդ շնորհաբեր այցի համար և ասաց, որ մեծ պատիւ է համարում Հայոց Հայրապետին իւր յարկի տակ ընդունելն իւր համար և խիստ զգացուած է այն ջերմ համակրութեան համար, որ Ն. Սրբութիւնը տածում է դէպի իւր ազգայինները և նորա ազնուականութիւնը:

Նոյն օրը Ն. Սրբութիւնը այցելեց Տփլիսի զինուորական շրջանի գլխաւոր պետին, Գեն. Էյտ., Ս. Վ. Վօլսկուն, որի մօտ մնաց մօտ կէս ժամ:

* * *

Նոյն երեկոյեան, ժամը 7-ին Ն. Վեհափառութեան այցելութեան եկաւ վրաց ազնուականութեան ընտրեալ պարագլխ, սակայն դեռ ևս պաշտօնի մէջ չհաստատուած իշխ. Կ. Ն. Աբխազէն, որ մնաց Ն. Սրբութեան մօտ կէս ժամից աւելի:

Յունիս 28-ին Ն. Վեհափառութեան կողմից Ատրպա-
տականի թեմի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսը և Դի-
ւանապետ Տ. Տիրայր ծ. վարդապետը փոխ-այցելութեան
գնացին Կովկասեան երկաթուղիների ընդհ. վարիչ Գեն.-
մայ. Վ. Ա. Վասիլևսկուն, գաղթականների գործերի ընդհ.
զեկավար Գեն.-մ. Վ. Մ. Թամամշեանին, զինուորական
հաղորդակցութիւնների պետ Գեն.-մ. Վ. Կ. Կարպովին
և Տփլիսի քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեանին:

* *
*

Առաւօտեան ժամը 10 1/2-ին Ն. Վեհափառութեան
ներկայացաւ Տփլիսի հայ հոգևորականութիւնը, գլխաւո-
րութեամբ Առաջնորդի՝ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի:

Ն. Սրբութիւնը օրհնեց Հայրապետական շնորհաբաշխ
աջի մերձեցող հոգևոր դասին և քաջալերական խօսք ուղղե-
լով նոցա՝ յորդորեց չվհատիլ սիրով տանել գաղթականու-
թեան և որբերի համար յանձն առած քրիստոնէական
պարտաւորութիւնը՝ իրենց լուման չխնայելու գթասրտու-
թեան գործի մէջ, ուր միայն կերևայ հովուի և Տիրոջ
պաշտօնեայի ամբողջ էութիւնն ու մեծութիւնը:

* *
*

Ն. Սրբութեան ներկայացաւ Ամերիկայի Տփլիսի հիւ-
պատոս միստրը Սմիթս, մնալով մօտ 20 ր:

* *
*

Ժամը 10-ին Ն. Վեհափառութեան ներկայացաւ «Տա-
տիանեան Յանձնաժողովի» լիազօր Պետրոգրադից եկած
պրօֆ. Վարդան Վարդանեան, իւր հետ ունենալով նոյն
Յանձնաժողովի առողջապահիկ խմբի ադամներ՝ պրիվատ-
դօցենտ Սուլիմա Սամոյլոյին և բժշկուհի Դուրիանսկուն:

Ուսուցչապետ Վարդանեանը առաքելութիւն ունէր
շրջելու և այցելելու բոլոր գաղթավայրերը՝ մինչև Խոյ, Սալ-
մաստ և հարաւ, ապա Վան և շրջակայքը, ծանօթանալու
գաղթականների ընդհանուր դրութեան հետ, մանաւանդ որ-
բանոցների կազմակերպութեան գործի և որբերի դրութեան

հետ, իսկ իւր ուղեկիցները պիտի շրջէին գաղթականների գլխաւոր կայան-վայրերը, ծանօթանալու բժշկական-առողջապահական վիճակի հետ և ջրի առողջական վիճակի վերայ ուշադրութիւն դարձնելու:

* * *

Յունիս 29-ին, ժամը 1½-ին բաղդ ունեցան ներկայանալու Ն. Ս. Օծութեան Թիֆլիսի բարեգործական և քաղաքակրթական բոլոր հաստատութիւնների ներկայացուցիչները: Ն. Սրբութիւնն ընդունեց նոցա մեծ գահ-լիճում, բազմած գահի վերայ, շրջապատուած իւր շքախմբի անդամներով:

Ներկայացող պատգամաւորների կողմից Ն. Սրբութեան խօսք ուղղեց Հ. Առաքելեան, համառօտ ակնարկով ընդգծելով այն մեծ գործը, որ կարճ ժամանակում կատարել են բոլոր ընկերութիւնները, համագործակից ոյժերով: յօգուտ գաղթականութեան բոլոր կարիքների և յոյս յայտնեց, որ Ն. Վեհափառութեան օրհնութեամբ կգայ աւելի բաղդաւոր մի շրջան, երբ Ն. Սրբութեան աջակցութեամբ ընկերութիւնները լաւագոյն պարագաների մէջ աւելի մեծ ու ցանկալի յառաջադիմութեան գործի կձեռնարկեն:

Ն. Սրբութիւնը պատասխանեց ողջոյնի խօսքին, համեմելով իւր առածները Սւետարանի օրինակներով, որ բարեգործութիւնը նման է փոքրիկ բայց կենսունակ խլամորին, որ հետզհետեւ պիտի խմորէ բարի, օժանդակ սկզբունքներով մեր կեանքը և եկեղեցու հովանաւորութեամբ առաւել ևս ընդլայնուի և վրեժանայ իւր գործառնութեան մէջ: «Ներկայ բոլէն, ասաց Ն. Սրբութիւնը, անցողակի մի շրջան է, փոթորկի ու աւերի, իսկ մեր կեանքը ալիքների խաղ դարձած մի նաւ, ահեղ փոթորկի հանդիպած: Իբրեւ նաւապետ, ես պարտաւոր եմ ուղղել իմ նաւս լաւագոյն և յուսալից մի նաւահանդիստ. «ապայն առանց օգնականների և նաւաստիների, նաւապետի գործն անյաջողութեամբ կպսակուի և նաւը յուսատու

փարոսից կհեռանայ: Այդպիսի բարի ու պիտանի նաւաստիներ ձեզ եմ ճանաչում, ամենքիդ, բոլոր ընկերակցութիւնների ներկայացուցիչներիդ: Նաւը պէտք է նաւահանգիստ ելնէ, ինչ գնով և լինի. և ես, նաւաղներիդ եմ յուսացած և նոցա ձեռնաւութեան յենած: «Համերաշխ գործակցութիւնն է, որ պիտի պսակէ գործը»: Ապա յորդորեց ամենքին, յուզուած շեշտերով, համերաշխութեան ուղին բռնել, որովհետեւ մեր բղկթուած նաւի փրկութեան միակ ուղին է այդ: Անձնականը, կուսակցականը, նեղը պէտք է մէկ կողմ դնել, եղբայր եղբօր ամուր պարիսպ դառնալ և հանրական շահը ամենից աւելի գերադասը ճանաչել:

* *

Ժամը 1 և 10 ր.-ին ներկայացան Ն. Վեհափառութեան Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ-նախագահ, ծերակուտական Ա. Ա. Չերիշև և պալատի դատախազ Ե. Մ. Կիսելևսկիյ, որոնք մնացին Ն. Սրբութեան մօտ 25 րոպէ:

* *

Ժամը 2-ին Ն. Սրբութեան բաղդ ունեցան ներկայանալ Տիգր. Նազարեանի ջանքերով կազմուած և ապրող «Հրատապ Սփոփանքի» բոլոր ապաստանաձևերը, — մեծ ու փոքր, իրենց որբուկների հետ: Պ. Նազարեան ներկայացրեց նոցա Վեհ. Հայրապետին, խնդրելով օրհնել իւր փոքրիկ գործը, ուր Հայութեան բեկորներն են ապաստան դտել Ն. Վեհափառութեան մեծ հովանաւորութեան տակ:

Ապաստարանի կողմից «Վասպուրականի» դպրոցի ուսուցչուհի օր. Զիթենին կարդաց հետեւեալ ուղերձը. —

Վեհափառ Տէր,

Պաշտելի Հայրապետ,

Արիւնաթաւալ, աւեր Հայրենիքի, յօշոտուած զաւակների վշտաբեկ Հայրապետ, արևշատութիւն Քեզ, ապրիր, պաշտելի Հայրապետ, մինչև Քո հզօր սուրբ աջովդ վերածնես մեր մայր

Հայաստան և Բարձր Հովանուդ տակ այսօր անդորր ու լի հաւատով մեզ ցաք ու ցրիւ ծնողազուրկ որբերիս, որդեկորոյս մայրերիս տանես, տեղաւորես մեր սուրբ երկրում, համայն հայութեան աւետեաց աշխարհում:

Աղաչում ենք, Վեհափառ Տէր, շնորհ արա մեզ ընդունել մեր խոնարհ հրաւեր՝ գէթ մի օր քանի մի լոպէներ նուիրելու մեզ Բարձր Հովանուդ տակ մեր «Հրատապ Սփոփանքում» Ձերդ Սրբութեան՝ ամբողջ ապաստանուածներին՝ երկրպագելու և մատուցանելու Բարձր Հովանաւորողիդ երախտագիտական մեր անհզր զգացումները:

Վեհափառութեանդ սուրբ և պաշտելի անուան նուիրուած ապաստարանիս «Գեորգեան» մանկական պարտէզը, «Վասպուրական» մեր դպրոցը և ընդհանրապէս Ձերդ Սրբութեան հովանին լիովի վայելող մեր նիստն ու կացը, Վեհափառ Տէր, աղերսում ենք, շնորհ արէք այցելել մեզ և տեսնել:

Կրկին արևշատութիւն Քեզ, սիրեցեալ սգաւոր Հայրապետ, մաղթում ենք մխիթար օրեր, զարնանաբոյր արշալոյս Քեզ, վերածնուած Մայր Հայաստանի օրհնութիւնը, ցնծութիւնն ու խրախճանը, յաղթական պսակը իղձերիդ:

Որդիական ակնածութեամբ Բարձր Հովանոյդ «Հրատապ Սփոփանք Մայր Հայաստանցիներին» ապաստանուածներ:

Ն. Սրբութիւնը հաճեց աջ տալ ամենքին, օրհնել և առել. — «Ուրախ եմ տեսնել հայութեան բեկորները բարի ապաստարանի տակ ի մի եկած: Կերթաք, կասէք, ձեր քոյրերին ու եղբայրներին, որ ամեն տեղ կան բարի մարդիկ և դոցանից մէկը սիրով ժողովել է Ձեզ և խնամում ու պահպանում է ձեզ, իբրև իւրը: Դուք որբեր չէք, այլ նորա որդիները»:

* * *

Յունիս 29. չորեքշաբթի, ժամը 2¹/₂-ին Ն. Վեհափառութիւնը բարեհաճեց այցելութեան գնալ Մեծ Իշխան Պետր Նիկոլաեիչին՝ շնորհաւորելու Նորին Կ. Բ. անուանակոչութեան տօնը: Վեհ. Հայրապետին ուղեկցում էին Տ. Մեսրոպ, Խորէն և Ներսէս եպիսկոպոսները, Դիւանապետ Տ. Տիրայր Ծ. վարդապետը, Արտակ և Լևոն վարդապետները, իսկ ընդունելութեան Յանձնաժողովի կողմից նախագահ Տ. Նազարեանը:

Պալատում Ն. Սրբութեան զիմաւորեց հերթապահատիւ տանդ գնն. մ. Կաշուրէյ և առաջնորդեց Ն. Կ. Բ. մօտ: Մեծ իշխան Պետր Նիկողաւիճն ընդունեց իւր ամուսին: Մեծ իշխանուհի Միլիցա Նիկողաւենայի հետ: Ն. Սրբութեան պալատի իրենց բաժնում ընդունեցին և ստացան Ս. Հայրապետի շնորհաւորութիւններն ու օրհնութիւնը:

Ելնելու ժամանակ Ն. Սրբութեան կողմից Մեծ իշխանին ներկայացուեցան իւր շքախմբի հետևորդ անդամները:



Յունիս 30-ին Ն. Սրբութեան կողմից փոխաւայցելութեան զնացին Տ. Ներսէս եպիսկոպոս և Դիւանապետ Տ. Տիրայր Տ. վարդապետ՝ Թիֆլիսի դատաստանական պալատի աւագ-նախագահ, ծերակոյտի անդամ, Ա. Ա. Չեբըշեին, դատական պալատի դատախազ Կիսիլեակին, Թիֆլիսի նահանգի ազնուականութեան նորընտիր պարագլուխ իշխ. Կ. Ն. Արխազիին, Թիֆլիսի Ամերիկական հիւպատոս մ-ր Սմիթին, Կաթողիկոսական ընդունելութեան Յանձնաժողովի կողմից Ս. Էջմիածին Հայրապետին հրաւիրելու պատուիրակութեան զնացած անդամներին՝ Պ. Պ. Միքայէլ Արամեանին, Մնացական Խունուեցին, Յարութիւն Փիրաւեանին և Անտօն Քալանթարեանին:



Ժամը 1-ին ներկայացան Ն. Սրբութեան Թիֆլիսի Թեմի հայ ուսուցիչ-ուսուցչուհիները, գլխաւորութեամբ Թեմակալ Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի

Ուսուցչական Միութեան Վարչութեան կողմից, նախագահ Ս. Աւետիսեան կարդաց մի ուղերձ, վեհ. Հայրապետի ուշադրութիւնը խնդրելով Հայ ուսուցչական մարմնի ներկայիս ծանր պայմանների վերայ, խնդրելով օժանդակութեան գալ նորա նիւթական անբաւարար վիճակը բարելաւելու, հաստատելով մի մասնախումբ զբաղուելու և մշակելու կենսաթոշակի հասուն հարցը և լուծումն տալու նորան:

Ն. Սրբութիւնը յայտնեց, որ ուսուցչական ամբողջ կազմի բարօրութեան խնդիրը շատ մօտ է իւր սրտին ու հոգուն, նոցա խնդիրը սիրով կկատարէ և ի մօտոյ մի յանձնախմբի կյանքնէ քննելու արծարծած հարցերը և իրեն զեկուցանելու այդ մասին:

Թիւրքահայ ուսուցչութեան կողմից առանձին ուղերձ ներկայացրեց ուսուցիչ Մկրեան, իրենց ըղձանքը և կարօտ կողմերը յայտնելով:

Հարց. 3-րդ, Թիւրքահայ, * * *
~~Նոյն օրը~~ Ն. Սրբութեան կարգադրութեամբ, կազմուեցաւ մի Յանձնաժողով, նախագահութեամբ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի, մասնակցութեամբ Տ. Խորէն և Ներսէս եպիսկոպոսների, ձեմարանի Տեսուչ Տ. Գարեգին ծ. վարդապետի, Ղարաբաղի թեմի ժ. կառավարիչ Տ. Վահան վարդապետի, պրօֆ. Վարդան Վարդանեանի, ուսուցչական մարմնի ներկայացուցիչների, Ներսիսեան, Յովնանեան, Գալիանեան դպրոցների տեսուչների և այլոց քննութեան առնելու յարուցած հարցերը, այն է ա) բարելաւել ուսուց. մարմնի նիւթական վիճակը, բ) հիմնել ընդհ. ուսուցչական մարմնի կենսաթոշակի գանձարկը և գ) կանոնաւորել ուսուցչական մարմնի և դպրոցական հոգաբարձութիւնների փոխ-յարաբերութիւնները, ինչպէս և ի նկատի ունենալ և Տաճկահայ ուսուցիչների վիճակը և Յանձնախմբի եզրակացութիւնները զեկուցանել Ն. Սրբութեան:

* * *

Ն. Սրբութեան ներկայացաւ Բագուի Մարդասիրական ընկերութեան նախագահ, Բագուի գաղթակ. Յանձնաժողովի լիազօր և Պետրոգրադի համագումարի կողմից ընտրեալ Հայկ Տէր-Միքայէլեան, Բագուի բիւրոյի ներկայացուցիչ Երդ. հաւատ. Տիգրան Յովհաննիսեան, Նոր-Նախիջևանից ժամանած, տեղական գաղթականական գործերի Յանձնաժողովի փոխ-նախագահ Դրիգոր Զալխուշեան:

* * *

Նոյն օրը ներկայացան Ն. Սրբութեան Ներսիսեան Հոգեւոր զպրոցի Հոգաբարձութիւնը և տեսուչը:—Ապա «Վան-Տոսպ»ի խմբագրական կազմը, խմբագիր Տ. Նազարեանի զխաւորութեամբ, հետն ունենալով պր. Մ. Մինասեանին և Արտ. Դարբինեանին, որոնք Վեհ. Հայրապետի առանձին ուշադրութիւնը խնդրեցին զաղթականների բազմապիսի կարիքների վերայ:

* * *

Վեհ. Հայրապետի կողմից այցելութեան զնացին Ատրպատականի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս և Աղէքսանդրապոլի յաջորդ Տ. Արտակ վարդապետ Տփլիսի փոխնահանգապետ Ե. Ն. Պանովին և Տ. Փոխարքայի Դիւանի կառավարչի պաշտօնակատար Ա. Ա. Կօլօզրիվովին:

* * *

Յուլիս 1-ին ներկայացաւ Ն. Սրբութեան Ղարաբաղի թեմի ժամ.-կառավարիչ Տ. Վահան վարդապետ Տէր Գրիգորեան:

* * *

Յուլիս 2-ին Նորին Վեհափառութեան յատուկ կոնգակով և պատուէրով Ատրպատականի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս ծայրագոյն վարդապետութեան աստիճան տուեց Ղարաբաղի թեմի ժամանակաւոր-կառավարիչ Տ. Վահան վարդապետին:

* * *

Յուլիս 2-ին Ն. Սրբութեան ներկայանալու բաղդ ունեցաւ Կովկասեան Զինուորական ճակատի զինուորական քահանայ Տ. Ռուբէն Բէկգիւլեանը, տալով հարկաւոր տեղեկութիւններ նոր զրաւած երկրամասերում գտնուող հայութեան մնացորդների մասին:

* * *

Ն. Սրբութեան ներկայացաւ Ն. Նախիջևանի Փոխանորդական պաշտօնից Ս. Էջմիածնի Սինօդի անդամութեան կոչուած բարձր. Տ. Գէորգ վարդապետը:

Ն. Սրբութեան, Վեհ. Հայրապետին ներկայանալով պ. Գրիգոր Զալխուշեան, խնդրեց իբրև նուէր՝ ընդունել Մ. Աթոռի Թանգարանին, իւր եղբայր Խաչերես Զալխուշեանի կողմից, հանդուցեալ հայ տաղանդաւոր դերասան Պետրոս Աղամեանի փղոսկրեայ կոթով գաւազանը և նորա նկարած մի փոքրադիր իւզաներկ նկարը:

Ն. Սրբութիւնը հաճեց ընդունել և պատուիրեց յանձնել այն Մ. Աթոռի Թանգարանին:

* * *

Յուլիսի 7-ին Վանից, Յովհաննէս վարդապետից, ստացած մի հեռագիր յայտնում էր, որ տեղական հայ գաղթականութիւնը չէ ստանում կանոնաւոր կերպով պետական նպաստը:

Վեհ. Հայրապետի Դիւանապետ Տ. Տիրայր Տ. վարդապետը, յուլիս 8-ին, յատուկ տեսակցութիւն ունեցաւ զաղթականների պարենաւորման ընդհանուր ղեկավար զեն. Մ. Վ. Թամամշեանի հետ, խնդրելով նորա աջակցութիւնը: Գեն. Թամամշեանն ամենայն սիրով ընդ առաջ գնալով այդ զիմումին, իօհոյն հեռագրական հաղորդակցութեամբ ճշգրիտ տեղեկութիւններ պահանջեց Վանի շրջանապետ Տերմէնից:

Մի քանի օրից յետոյ ստացած հեռագրական տեղեկութիւնների հիման վերայ զեն. Թամամշեանը խոստացաւ ի նկատի ունենալով իւր Վան գնալու հանգամանքը՝ անձամբ, տեղն ու տեղը ստուգել իրերի վիճակը, կարգադրել, որ տրուի պետական նպաստ կարօտաւոր ընտանիքներին և ամէն խնամք ցոյց տրուի նոցա: Այս մասին Հայրապետական Դիւանը հեռագրով հաղորդեց Վան, Յովհաննէս վարդապետին, անձամբ զիմել և խնդիրը պարզել, երբ զեն. Թամամշեանը Վան կհասնէ:

* * *

Յուլիսի 9-ին, ցերեկուայ ժամը 4¹/₂-ին Ն. Վեհափառութեան այցելութեան եկաւ Կովկասեան Փոխարքայի քաղաքացիական մասի կառավարիչ զեն.-լէյտ. իշխան Օր-

լով՝ հետն ունենալով նաև նոր գրաւած Տաճկական Հայաստանի համար նշանակուելիք ընդհանուր նահանգապետ զեն. լէյտ. Ն. Ն. Պէշկով:

Հիւրերը քնացին Ն. Սրբութեան մօտ ժամից աւելի, խորհրդակցութեան նիւթ ունենալով զանազան խնդիրներ:

* *

Յուլիս 9-ին, երեկոյեան, Ն. Վեհափառութեան ներկայացան «Ազգային Բիւրոյի» անդամները:

* *

Ի նկատի ունենալով Հայոց եկեղեցական դպրանոցների ուսուցիչներից շատերի վերահաս զինուորակոչի ենթակայ լինելու հարցը, Ն. Սրբութիւնը բանաւոր դիմումն ունեցաւ պատշաճաւոր բարձր իշխանութեան, միջնորդելով ազատ կացուցանել նոցա զինուորակոչի պարտաւորութիւնից, աչքի առաջ ունենալով այն ծանր դրութիւնը որի մէջ կարող են դանդաղել դպրոցները և ուսանող սերունդը ուսուցիչների զինուորակոչի հանգամանքով:

Այդ նկատումով Տ. Դիւանապետի կողմից հետևեալ յայտարարութիւնը տրուեցաւ լրագրերին.

«Հայոց եկեղեցական դպրոցների մէջ պաշտօն վարող բոլոր ուսուցիչները, որոնք ենթակայ են տարւոյս յուլիս 15-ի զինուորակոչին, սորանով հրաւիրւում են անմիջապէս տեղեկութիւններ հաղորդել իրենց թեմական Առաջնորդներին իրանց զինուորական կացութեան և դպրոցներում ծառայած տարիների մասին»:

Միաժամանակ նաև հրահանգ տրուեցաւ թեմական առաջնորդներին, կազմել իրենց թեմերի դպրոցների բոլոր ուսուցիչների ցանկն և անմիջապէս ներկայացնել Տ. Փոխարքայի Դիւանատունը, յանուն Ն. Սրբութեան, խնդրելով ազատ կացուցանել Հայոց եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչներին վերահաս զինուորակոչի պարտաւորութիւնից:

* *

Յուլիս 10-ին, Կիւրակէ, Ն. Սրբութիւնը բարեհաճեց
եկեղեցի իջնել սովորական շքով:

Պատարագիչն էր Աղէքսանդրօպօլի յաջորդ Տ. Արտակ
վարդապետը:

Ն. Վեհափառութեան պատուէրով Ճեմարանի տեսուչ
Տ. Գարեգին ծ. վարդապետը քարոզ խօսեց Տաճարի մէջ
խոնուած ժողովրդին, բնաբան ունենալով «Անցաք մեք ընդ
հուր և ընդ ջուր և հաներ զմեզ ի հանգիստ»:

Քարոզիչը զեղեցիկ համեմատութեամբ պատկերացրեց
տառապող Իսրայէլի և վշտազնած ու հիւժուող Հայու-
թեան անցեալի և ներկայի վիճակը, իւր ունկնդիրներին
առաջ զօրեղ շեշտերով պարզելով այն միտքը, որ թշուա-
ռութեան և վշտի բովի մէջ է մարդու մ ազգի մեծութեան
և ոյժի դաղափարը և որ Տիրոջ ապաստանող ազգը երբեք
կորստի չի մասնուիլ, այլ «հուր և ջուր» անցնելով կեն-
սունակ հանգիստ ելնելու դժուարին, բայց անվրէպ ուղին
է գտնում:

* * *

Յուլիս 10-ին, ցերեկուայ ժամը 4-ին, Տ. Փոխարքայի
քաղաքացիական մասի օգնական զեն. լէյտ իշխան Օրլովի
բնակարանում տեղի ունեցաւ մի մասնաւոր խորհրդակ-
ցութիւն, որին մասնակցում էին Վեհ. Հայրապետի կող-
մից՝ Թիֆլիսի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոս, Երեւանի
փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոս, Ատրպատականի
առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս, Հայրապետական Դիւա-
նապետ Տ. Տիրայր ծ. վարդապետ, կալուածատէր Միքայէլ
Յովս. Արամեան, երդուեալ հաւատարմատարներ՝ Սամսոն
Ստեփ. Յարութիւնեան և Յովհաննէս Սիմ. Սպենդիարեան:
Կառավարութեան կողմից ներկայ էին խորհրդակցութեան՝
բացի իշխան Օրլովից, որ վարում էր նախագահի պաշտօն,
նաև նոր նուաճուած Տաճկական Հայաստանի համար
նշանակուելիք ընդհանուր նահանգապետ զեն.-լէյտ.
Նիկ. Ն. Պէշկով, փախստականների պարենաւորման գործի
զեկավար զեն. մ. վ. Մ. Թամամշեան, Փոխարքայի Դիւանի

Կառավարչի պաշտօնակատար՝ Կօլօգրիվովի Դիւանի ծառայող Պիտարեակիյ:

Խորհրդակցութեան խնդիրներն էին ա) Աշխատանքի ընդունակ գաղթականների վերադարձը հայրենիք, այն է վանի Ալաշկերտի, Բայազէդի և Բասէնի շրջանները ինչպէս և նոցա բնակութիւններ հաստատելու գիւրութիւն տալու ինչպէս և վերադարձող գաղթականներին և բնակութիւն հաստատողներին պետական օժանդակութիւն (կենդանիներ, լծկան, սերմացու երկրագործական գործիքներ ևն՝) տալու հարցը. բ) Միւսիւլման ազգաբնակութեան մօտ մնացած հայերի որոնելու և ազատագրելու հարցը. գ) Յանքերի և խոտահարների կանոնաւոր մշակութեան և օգտուելու, ինչպէս և եղած շէնքերը աւերից ազատ պահելու հարցը. դ) Հաղորդակցութեան ճանապարհների ապահովութեան, պաշտպանութեան և վերադարձող գաղթականներին անվտանգ իրենց տեղերը հասցնելու և վերահաստատելու հարցը. ե) Կրօնական պահանջներին զօհացում տալու հարցը և զ) Էրզրումի ու Տրապիզոնի շրջանի հայերի կալուածական և ստացուածքի խնդիրների ապահովութեան հարցը:

Ժողովը վերջացաւ երեկոյեան ժամը 7^{1/4}ին: Վեհ. Հայրապետի ներկայացուցիչները զօհունակութիւն յայտնելով և օրհնելով նախագահին Ն. Սրբութեան կողմից, վերադարձան Վեհարան:

* *

*

Յուլիս 11-ին Ն. Սրբութիւնը բարեհաճեց իւր հովանաւորութեան տակ եղած Տ. Նազարեանի Ապաստարանին նուէր տալ 1400 ռ. Ս. Էջմիածնի եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցներից:

* *

*

Յուլիս 13-ին, առաւօտեան ժամը 10-ին Ն. Սրբութիւնը բարեհաճեց այցելել Տփլիսի մէջ ապաստան գտած ռբերին խնամող Որբանոցները: Ն. Սրբութեան ուղեկցում էին Թիֆլիսի թեմի առաջնորդ Տ. Մեորոպ եպիսկոպոս:

Դիւանապետ Տ. Տիրայր ծ. վարդապետ, Սինոդի անդամ
Տ. Գէորգ վարդապետ, Ալէքսանդր. յաջորդ Տ. Արտակ
վարդապետ, Կ. Մ. Ալիխանեան և ընդունելութեան
Յանձնաժողովի նախագահ Տ. Նազարեան:

Ն. Սրբութիւնը հաճեց այցելել Կրճանիս արուար-
ձանի հետեւեալ Որբանոցները:

ա) Կանանց Յանձնախմբի Որբանոցը, որ գտնուում էր
Ղուլիջանեանի տանը, ուր ապաստանած են 25 տղայ և
23 աղջիկ, ընդամենը 48 ուր: Նորին Սրբութեան ղիմա-
ւորեցին Կառավարչուհիները և խնամատար տիկիններից
Տ. Ռօտինեան, Տ. Իստամանեան:

բ) Մանթաշեանի այգում ապաստան գտած Որբա-
նոցը, ուր կային 14 տղայ և 15 աղջիկ, ընդամենը 29
որբ: Այդ որբանոցը միաժամանակ և Կրճանիսի բոլոր Որ-
բանոցների հիւանդանոցն է: Ն. Սրբութեան ղիմաւորեցին
հիւանդանոցի բժիշկը, Կառավարչուհի տ. Աշխէն Նաւա-
սարդեան: Բարեբաղդաբար միայն 4 հիւանդ կային, այն
ևս շատ թեթեւ:

գ) Ծուրինեանի տանը ապաստան գտած Որբանոցը,
ուր կային 34 տղայ և 83 աղջիկ, ընդամենը 117 որբ:
Ն. Սրբութեան ղիմաւորեցին խնամակալուհի տ. Դարիա
Մ. Յովհաննիսեան, ուսուցիչ-ուսուցչուհիների և Կառա-
վարիչների հետ: Ն. Սրբութեան երգով ընդունելուց յե-
տոյ, բոլոր որբերը մօտեցան Ն. Սրբութեան աջն առնե-
լու, ծունկ չոքելով թարմ կանաչի մէջ դրած Հայրապե-
տական զահոյքի առաջ: Սրտաշարժ տեսարան էր մի ի
ծնէ կէս-անդամաւոյծի Հայրապետի առաջ խորին ջերմե-
ռանդութեամբ և հաւատքով ծունկի գալը, իւր բնական
խոթութիւնից բժշկուելու մեծ յոյսով: Վեհ. Հայրապետը
սիրով գուրգուրեց, օրհնեց այդ փոքրիկին, ինչպէս և
միւս բոլոր որբերին: Ասկա մի առ մի ղիտեց ննջարաննե-
րը, սեղանատունը, ձեռագործի ի ցոյց դրած նմուշները,
որից շատ գոհ մնաց, մանաւանդ որ որբերն իրենք պիտի
պատրաստէին իրենց ձմեռուայ զգեստները, գուլպաները,
ոտնամանները և այլն:

դ) Տփլիսի Կուսանաց մայրապետի՝ Կոյս Հռիփսիմէ Թայիրեանի տանն ապաստան գտած Որբանոցը, ուր կային 12 տղայ և 27 աղջիկ, ընդամենը 39 որբ։ Ն. Սրբութեան ընդունեցին Կուսանաց անապատից Կոյս Մարիամ և ընկերուհին, Կառավարչուհիների և ուսուցիչների հետ։

ե) Տփլիսի Օրիորդների Յանձնաժողովի Որբանոցը, ուր ապաստան էին գտած 17 տղայ և 23 աղջիկ, ընդամենը 40 որբ։ Ն. Սրբութեան ընդունեցին հերթապահ Օրիորդ-խնամակալները։

զ) Տփլիսի Հայ քահանայութեան խնամքով պահպանող Որբանոցը, որ գտնուում է Թամամշեանի այգում, ուր ապաստան են գտած 48 տղայ և 25 աղջիկ, ընդամենը 73 որբ։

Վեհ. Հայրապետի կառքը, որովհետև չէր կարող Որբանոցի դուռը հասնել, կանոնաւոր ճանապարհ չլինելու պատճառով, իսկ Ն. Սրբութեան հաճելի էր անշուշտ այցելել որբանոցը, ուստի կառքից իջնելով յանձն առաւ զառիվայր արահետով, թփերի միջով իջնել զէպի պարտէզը, մեծ դժուարութեամբ, ճանապարհը տեղ-տեղ հաղիւ միայն մի ոտք դնելու հնարաւորութիւն էր տալիս։ Ն. Սրբութեան Որբերն ընդունեցին ձորակի միւս ասփին երգերի և կեցցէների ձայներով, քահանաների զլխաւորութեամբ, ծխականների ներկայացուցիչների, իրենց ուսուցիչների և դաստիարակչուհիների ղեկավարութեամբ։

Ն. Սրբութիւնը առաջնորդուեցաւ Որբանոցի պատշգամբը, ուր Որբանոցի պահպանող քահանաների և ծխակերեցփոխանների կողմից ողջոյնի խօսք արտասանեց Տ. Գիւտ ա. քնյ. Աղանեան, համառօտ հաշիւ ներկայացնելով Որբանոցի պահպանութեան պատմութեան և հաշուեկշռի հետ։ Ն. Սրբութիւնը գոհունակութիւն յայտնեց քահանայութեան ներկայացուցիչներին, հ. հ. Տ. Գիւտ ա. քնյ. Աղանեանին, Յարութիւն քնյ. ձուղուրեանին, և միւսներին իրենց հոգատար խնամքի համար, յորդորելով առաւել սիրով և խնամածութեամբ վերաբերուիլ և ընդարձակել իրենց քրիստոնէական գործի

աահմանները և չափը: Ապա մի առ մի դիտելով ննջարանները, սեղանատունն ու խոհանոցը, օրհնելով ամենքին՝ նոյն ոլորապտոյտ արահետներով, հետիստն բարձրացաւ լեռնալանջը և կառք նստելով ուղեորուեցաւ դէպի Կըրծանիսի միւս Որբանոցը:

է) Ծիրանաւորի վանքի մէջ ապաստան դառնալով Որբանոցը, ուր պատապարուած էին 78 տղայ և 61 աղջիկ՝ ընդամենը 139 որբ:

Վանքի լայն բակում երկշար, լայնիկեկ կանգնած Որբերը երգերի ձայներով ընդունեցին Վեհ. Հայրապետին, որին ողջունելու էին եկած Կրծանիս միւս բոլոր Որբանոցների Վարչութեան անդամները, իրենց հետ ունենալով նաև այդ Որբանոցի Վարչութեան անդամուհի-խնամատարներին, Տիկ. Տէրտէրեան, օր. Մ. Տէր Յովհաննիսեան և դաստիարակչուհիները:

Ն. Սրբութիւնը հաճեց դիտել ընդարձակ Որբանոցի երկյարկ շինութիւնը, բոլոր մասերով, մտաւ աղօթելու Ծիրանաւորի վանքը և ապա խնամատար տիկիներին հրաւիրով հաճեցաւ մի ժամի չափ հանգստանալ Որբերի փոքրիկներին յատկացրած երկյարկ շինութեան պատըշգամբում:

Կանանց Յանձնախումբը բաղդ ունեցաւ հիւրասիրել Ն. Սրբութեան նախաճաշով, գեղեցիկ ծաղիկներով զարդարած պատշգամբի վերայ: Ն. Սրբութեան յատուկ սեղանի երկու կողմը սեղան էր պատրաստուած նաև իւր շքախմբի և հետևորդ անդամների և տիկիների համար: Տ. Մեսրոպ եպիսկոպոսը բաժակ բարձրացնելով առաջարկեց Ն. Սրբութեան կենացը, շնորհաբեր դալուստ մաղթելով Վեհին և խնդրելով օրհնել Կանանց Յանձնախմբի ջանքերն ու խնամածութեան գործը:

Ն. Վեհափառութիւնը յուզիչ շեշտերով ընդգծեց սիրոյ գործի վսեմութիւնը, մանաւանդ կանացի ջերմութեամբ օժտուած գործը, իւր ուրախակցութիւնը յայտնեց տեսած բոլոր Որբանոցների գեղեցիկ կարգապահութեան, մաքրութեան, խնամածութեան հոգատարութեան համար, ընդ-

գրծեց ընկերակցութեան գործի այն տեսակէտը, որով խրախուսող գործօն են հանդիսանում իրենց փոքրիկներին ձեռագործի և պիտանի արուեստների սէրը պատուաստելով նոցա հոգուն և մտքին և ապա օրհնեց բոլոր ներկայ եղող տիկիկներին, օրիորդներին, ինչպէս բացակայ անդամակցուհիներին, յորդորելով նոյն եռանդով ու սիրով առաջ տանել հայութեան բեկորների խնամարկութեան մեծ գործը։ Դառնալով իւր շուրջը խմբուած փոքրիկ որրիկներին ասաց, «Թող ամենքիդ սրտի ու հոգու մէջ ամուր ու անշէջ պահպանուի այն հոգածութեան ու խնամքի երախտագիտութեան զգացումը, որ դուք վայելում էք, օտար, ըստ երևոյթին, ոչ մի կապ չունեցող անձերի քնքոյշ խնամքն ստանալով ամենալայն չափով ու սիրով, սակայն այդ անձերը օտար չեն, քանի որ ամենքն ևս կապուած են ձեզ հետ արեան և զգացումի անքակ կապերով։ Թող ոչ ոք ձեզանից չմտածէ, որ զրկուած էք ձեր մայրերից, հարազատ միակ մօրից ու քրոջից զրկուելով, ձեռք բերիք մի անդամից մի քանիսը, որ պակաս հոգս ու խնամք չունեն ձեզ վերայ»։

Պ. Նազարեան առաջարկեց խնամարկու տիկիկներին կենացը, և դէմս ներկայ եղող Տիկ. Յովհաննիսեանի, Ղամբարեանի, Ռօտինեանի, Իստամանեանի, որոնք շարունակում են տանել իրենց հանգուցեալ ամուսինների հասարակական գործը՝ ոչ պակաս եռանդով և արդիւնքով։

Փոքրիկ որբերը շատ մեծ գուարճութիւն և հոգեկան բաւականութիւն պատճառեցին Ն. Սրբութեան իրենց տեղական երգերով, զաւելչտական արտասանութեամբ, մանաւանդ փոքրիկ, հազիւ 10 տարեկան Սիրվարդը, ինչպէս 5—6 տարեկան քառեակը, իրենց տեղական մեծ վարպետութեամբ կատարած սլարերով, որ մի կատարեալ նորութիւն էր ներկայ եղողների համար։

Ն. Սրբութիւնը հինգ ժամ որբերի մէջ անցնելով և հոգեպէս մխիթարուած, օրհնելով ամենքին վերադարձաւ Վեհարան իւր շքախմբի հետ։

հայրենիք ճարելու յոյսերով: Էլի սփոփանքի ուրախութեան ար-
ցունքով են ծովանում հէգ գաղթականների աչքերը:

Բայց այս ամենից աւելի սրտաշարժն ու քնքոյշը Քո այցե-
լութիւնն է այս խեղճերին այս արտասուաց պարտիզում, Դու
իջել, խոնարհել ես Քո վեհ աթոռից ու այցելութեան եկել հայ
գաղթականներին: Այս այցելութիւնը զուտ Յիսուսական է ու
նման Բարի Փրկչի այցելութեանը Երիբովի պատերի տակը թափ-
թփուած, անողորմ աշխարհից հալածուած խեղճերին:

Քո այս վսեմ այցելութեան օրը հայ գաղթականը Քո դար-
շապարի շուրջն է փռում, Քո ճամբի վրայ, իր արցունքների վրայ,
իր երախտագէտ զգացմունքը, իր որդիական հիացմունքը ու
սրտագինս կանչում՝ «Օրհնեալ որ դաս յանուն Տեառն»: Դու բարով,
հազար բարով ես եկել:

Օրհնիր, Մեծ Քահանայապետ, օրհնիր Քո կենդանարար
օրհնութեամբ այս արտասուաց պարտէզը, այս արցունքները, այս
հէգ գաղթականներին, որ Քո ազգաշահ ըզճերիդ ու դեղերումնե-
րիդ համար են աղօթում: Օրհնիր այս ապապտարանի հիմնադիր-
տնօրէն Տիգրան Նազարեանին, այս անօրինակ ու անձնուէր բա-
րեկամին հայ գաղթականի:

Եւ Քո օրհնութեան շնորհիւ թող վերակենդանանայ հոգով
ու մարմնով կիսամեռ հայ գաղթականը, մխիթարուի ու բարոյա-
պէս վարձատրուի անդուգական բարերարը:

Որից յետոյ օրիորդների խումբը երգեց «Տէր Կեցո՛ւ,
զՀայս», Ապա ապաստարանի վարժուհի գաղթական օր-
վերժինէն կարգաց հետեւեալ ուղերձը.—

Վեհափառ Հայրապետ.

«Հրառապ Սփոփանք Մայր Հայաստանցիներու» մէջ պատըս-
պարեալներս տարի մը առաջ, ազատուած թիւրք գազաններու
ոճրագործ ձեռքերէն, զրկուած մեր նուիրական հայրենիքի օճախ-
ներէ, կորսնցուցած մեր հայրերը, մայրերը, եղբայրներ և քոյ-
րերը՝ հոգեպէս և ֆիզիքապէս, անտանելի տանջանքներ կրելով՝
հազիւ ինքզինքնիս, օտար և անձանօթ հորիզոնի տակ ձգեցինք
բոլորովին ուժասպառ և յուսահատած:

Գրեթէ ոչնչացած կըզգայինք ինքզինքնիս, երբ յարգելի
պ. Տիգրան Նազարեանի հիմնած և Զեր Ս. Օծութեան, Ամենայն
Հայոց Վեհափառ Հայրապետին բարձր հովանաւորութեան տակ
առնուած այս ապաստարանը ազատեց մեզ ստոյգ մահուանէ, և
ցարդ կը խնամէ ու կը սնուցանէ մեզ:

Ապա պ. Նազարեան իւր ապաստարանի համառօտ պատմութիւնը կարդաց և հաշուեւորութիւնը տուեց, որից երեաց, քի մուտք ունեցել է Ն. Սրբութեան տրամադրած գումարներից և զանազան անձերից 26573 ռ. 44 կոպէկ և ծախք 23,476 ռ. 92 կոպէկ և առձեռն դրամ մնում է 3096 ռ. 52 կոպէկ, և յոյս ունի որ, Սրբերին խնամարկող Հայրապետի շնորհիւ և նոցա հսկող Տիրոջ օրհնութեամբ երբէք իւր զանձարկող պահապանութիւն չի զգայ:—Կարդացած հաշուեկշիւը ծրարած շատ նուրբ ասեղնագործած, իւր Ապաստարանի օրիորդների արդիւնք մի փոքրիկ ծածկոցի մէջ մատոյց Ն. Սրբութեան:

Ն. Սրբութեան թէյ մատուցուեցաւ Ապաստարանի կողմից, որով և հիւրասիրուեցան միւս հրաւիրեալները՝ ճոխ սեղանի շուրջը բոլորած:

Մէջ ընդ մէջ երգում էին Թանգոյեան եկեղեցու երգեցիկ խումբը, մի քանի փոքրիկ աղջիկ, ղեկավարութեամբ հ. Սահակ քհյ. Սահակեանի: Երգում էին և Ապաստարանի որբերի խումբը: Արտատանուեցան մի քանի ոտանաւորներ:

Ն. Սրբութիւնը մեկնելուց առաջ բարեհաճեց իւր մօտ կանչել պ. Նազարեանին և խրախուսել նորան հետեւեալ խօսքերով:

«Պ. Նազարեան, թւում է ինձ թէ Նախախնամութեան կամեցողութեամբ է, որ դու չես ամուսնացել, հոգուդ թելադրանքով ընտանիք չես կազմել, նախազգալով թէ մի օր մի մեծ ընտանիքի հայր կը լինիս, բազմաթիւ որդիների խնամակալ բարերար: Հայ բազմաթիւ այս գաղթականներն են քո ընտանիքը, այս մանուկները՝ քո որդիքը, այս բացօդեայ պարտէզը՝ քո տունը: Երջանիկ հայ, որ Յիսուսի ամենից վեհ ու քնքոյշ պատուէրն ես կատարել. «Թոյլ տուք մանկտույդ գալ առիս, զի այսպիսեացդ է արքայութիւնն Աստուծոյ»:

«Քո այս գործը, քո հազուագիւտ աշխատանքը, որ իմ բացարձակ վստահութիւնն է շահել, արժանաւոր վարձա-

տրութիւնը չունի այս աշխարհում, մանաւանդ մեր ազգի մէջ, որ ոչ նիւթական, ոչ բարոյական վարձատրութեան համար է հարուստ: Դու մեր ազգից վարձատրութիւն մի սպասիր. նա իր իսկական անձնուէր գործիչների համար միայն մի վարձատրութիւն ունի՝ փառաւոր, շքով թաղում, երբ մեռնում են:

«Որովհետեւ քո այդ մարդասէր գործունէութեան շարժիչ ոյժը քո հոգին է, քո անձդ ակնկալութիւն չունի, այդ պատճառով էլ քեզ վարձատրողը միայն ամենատես Աստուածն է և պատմութիւնը: Ես կաղօթեմ, որ Աստուած վարձատրէ քեզ, քո զթոտ սիրտը երանական գոհութեամբ լցնէ:

«Պատմութեան մէջ դու վարձք ունիս. գալիք պատմութիւնը քեզ չի մոռանայ, նա քեզ համար իր փառաւոր էջերում երկու տող կը նուիրի:

«Օրհնում եմ քեզ, պ. Նազարեան, օրհնում եմ քո սիրտը, քո գործը:

«Օրհնում եմ քո Պարտէզ-Ապաստարանը, ուր հայ գաղթականն է ապաստանել. օրհնում եմ գաղթականներիդ, ձեզ, իմ բաղդազուրկ հոգևոր զաւակներ, իմ սիրելի փոքրիկներ, որ ձեր կրած տառապանքի մէջ մեծ էք Աստուծոյ առաջ: Տէր Յիսուս քաղցր աչքով նայի ձեզ և ձեր քայլերն ուղղէ ձեր սիրելի հայրենիքը, մեր պապերի յիշաշատակներովը ցանուած ու ցօղուած Հայաստան:

«Ձեզ ամենիդ յանձնում եմ Բարձրեալ Աստուծոյ խնամքին. խաղաղութեամբ մնաք:»

ՎԵՏ. Հայրապետը ապա հաճեց դիտել Ապաստանարանը և իւր օրհնութիւնը պարզեւելով բոլոր որբերին, հիւրերին և զեկավար-խնամարկուին, հաճեց վերադառնալ Վեհարան իւր շքախմբի հետ:

* * *

Երդնկայի Ռուսաց յաղթական զօրքի կողմից գրաւուելու առթիւ Ն. Սրբութիւնը իւր ուրախակցութիւնը

յայտնեց Ն. Կ. Բ. Մեծ-իշխան Տ. Փոխարքային, հետեւեալ
հեռագիրն ուղղելով նորան:

«Կոչո՛ւր.

«Նորին Կայսերական Բարձրութեան Օգոստափառ Փո-
խարքային, Մեծ-իշխան Նիկողայ Նիկողաւիշին.

Հոգով հրճուում եմ Բարձրեալից ռուսական քաջարի
զօրքին շնորհած նոր, փառաւոր յաղթանակով, որ տարան
նոքա թշնամու դէմ՝ Երզնկայի գրաւումով: Սրտանց ու-
րախ եմ ռուսական յաղթական զօրքի յառաջխաղացու-
թեամբ, որ ղեկավարում է նորա Օգոստափառ Հրամանա-
տարը: Շնորհաւորելով Ձերդ Կայսերական Բարձրութեան
այս փառաւոր յաղթութիւնը՝ օրհնում եմ Ձեզ և ցան-
կանում նորանոր յաղթական նուաճումներ և յառաջ-
խաղացութիւն ռուսական ամբողջ փառապանծ զօրքին:

Վշտի յոյզերի աղօթքներս եմ ուղղում Բարձրեալին
մարտի դաշտում քաջի մահ գտած հերոսներին: Յաւերժ
յիշատակ հերոսաբար ընկած քաջերին:

Գ Է Ո Ր Գ Ե.

Կաթողիկոս ամենայն Հայոց»:

Ի պատասխան այս հեռագրին Ն. Վեհափառութիւնն
ստացաւ հետեւեալ հեռագիրը.

«Թիֆլիս.

Ամենայն Հայոց Կաթողիկոս

Գ Է Ո Ր Գ Ե. ին.

Սրտանց շնորհակալ եմ Տիրոջ մեր քաջարի Կովկաս-
եան բանակին շնորհած նոր յաղթութեան համար՝ Երզն-
կայի գրաւման առթիւ Ձերդ Սրբութեան աղօթքների և
ապագայում նորանոր յաջողութիւնների ցանկութեան
համար:

Գեներալ-աւիւսանդ

Նիկոլ Ա. Յ.

Յուլիս 13-ին, չորեքշաբթի, երեկոյեան պ. Տիգրան Նազարեանի նախագահութեամբ, ազգային-եկեղեցական-բարեգործական հաստատութիւնների և հոգաբարձութիւնների ներկայացուցիչները ժողով ունենալով, որոշել էին ն. Վեհափառութեան առաջիկայ Օժման Ե-րդ տարեդարձի առթիւ մատուցանել շնորհաւորութիւններ, կազմել ի պատիւ ն. Սրբութեան հրապարակական-հասարակական ճաշկերոյթ, զարդարել Վեհարանը ցերեկը և երեկոյեան հրաժառութիւն կազմակերպել վանքի բակում, Հայրապետական մաղթանքը կատարել դուրսը՝ բակում և որոշ գումար դնել ն. Սրբութեան տրամադրութեան տակ:

Յանձնաժողովի այդ որոշումներին ն. Սրբութիւնը բարեհաճեց յայտնել, թէ քանի որ Իւր որդիները և ժողովրդի մեծ մասը սգի և արտասուքի օրեր են անցնում ինքը չէ կարող ընդունել այդպիսի ցոյցեր, թէ և դոքա լինէին անկեղծ սիրոյ արգասիք և բղխէին Իւր միւս զաւակների սրտից: Առանձին տրամադրելի գումարի կարիք ինքն անձամբ չունի և ինչ որ ունի Իւր հօտի վշտերի և արցունքի արբելու գործին է յատկացնում: Կընդունէ միայն համեատ շնորհաւորութիւններ Իւր հօտի կողմից և Հայրապետական մաղթանքն ևս կլինի ներսը՝ Տաճարում, որպէսզի այս ջերմ օրերին որ և է մէկը արեւահար լինելու վտանգին չենթարկուի:

* *
*

Յուլիս 17-ին, կիւրակէ, Վարդափառի տօնին, տօնուեցաւ ն. Սրբութեան Օժման Ե. տարեդարձը, Վանքի Մ. Եկեղեցում:

Օրուայ պատարագիչն էր Ասրպատականի Առաջնորդ Տ. Ներսէս Էպիսկոպոս: Երգեցիկ խումբը կառավարում էր Գր. Միրզայեան և երգեցողութեան մասնակցում էին Կայսերական թատրոնի նախկին տենոր երգիչ Բ. Ամիրջանեան և երգչուհի Ասլանեան: Տաճարը ծայրէ ի ծայր լիքն էր

աղօթողներով և ազգային-եկեղեցական բոլոր հաստատութիւնների ներկայացուցիչներով:

«Հայր մեր»ից առաջ, Վեհ. Հայրապետի պատուէրով «եղան բարձրացաւ Սինօղի անդամ Տ. Գէորգ վարդապետ և քարոզ խօսեց ժողովրդին:

Ընթերցողները կգտնեն այդ քարոզը «Արարատ»-ի ներկայ համարում:

* * *

Պատարագն աւարտելուց յետոյ կատարուեցաւ Հայրապետական մաղթանք, որին ներկայ էին Ն. Սրբութեան շքախմբի բոլոր անդամները, ինչպէս և Կարուց յաջորդ Տ. Երեմիա վարդապետը, Ախալքալաքի գործակալ Տ. Երուանդ վարդապետը, Թիֆլիսի քահանայութեան ամբողջ դասը, Կուսանաց վանքի կոյսերն իրենց սպիտակափառ քօղերով:

Մաղթանքից յետոյ Ն. Սրբութիւնը Վեհարան ելաւ բազմահազար ժողովրդի «կեցցէների» ձայներով: Կարմիր մահուդով, արեւադարձային շքեղ բուսականութեամբ պըծնուած սանդուղտների գլխին կանգնելով «Պահպանիչ»ով օրհնեց իւր ժողովրդին և մտաւ Վեհարան:

Հայրապետական Գահ բազմելով Ն. Սրբութիւնն ընդունեց շնորհաւորութեան եկած մեծ բազմութիւնը, ուր կային ամէն սեռի և դասակարգի ներկայացուցիչներ, աւագներ, հոգաբարձութիւններ, երեցփոխաններ և այլն և այլն:

Տիրոջ Օծեալի աջն առնելու մօտեցան Մ. Աթոռի միաբանութեան ներկայ անդամները, եկեղեցական դասը, Կուսանաց միաբանութիւնը և ապա ժողովրդի միւս անդամները:

Տիֆլիսի հասարակական խաւերը միացած մի Ուղերձով շնորհաւորեցին Ն. Սրբութեան Ե. տարեդարձն իւր Քահանայապետական ս. Օծման, որի առիթով բժշկապետ Բագ. Նաւասարդեան կարգաց հետեւեալը.

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գեորգայ Ե. Ամենայն
Հայոց Կաթողիկոսի Հինդեոող տառեղարձի առթիւ.

Թիֆլիսի Հայ ազգային հաստատութիւններէ կողմից.

Ուղերձ.

Վեհափառ Տէր,

Քո ժողովրդի աննախընթաց տառապանքի օրերում մեր
աչքերը յառած են Հայոց Հայրապետութեան և որդեսէր Մեծ
Հովուապետիդ վրայ: Մեզ տիրող արտաքին ու ներքին խաւերի
մէջ Հայրապետ ու Հայրապետութիւն մեր ուղին լուսաւորող պայ-
ծառ լապտերն է, մեր սրտերի քաջալերութիւնը, մեր վհատու-
թեան փարատութիւն, յոյսը՝ մեր հողինների՝

Այս ըմբռնումով ու ջինջ ոգևորութեամբ է, Մեծ Քահանա-
յապետ, որ որդիական խորին ակնածութեամբ ժողովրդասէր
Հօրդ ընդառաջ ելան Թիֆլիսի Հայոց Ազգային հաստատութիւն-
ները, որոնց երջանկացրիր Քո Բարձր Շնորհարեք այցելութեամբ:

Կրկին երջանիկ ենք, որ Քո Գահակալութեան հինգերորդ
տառեղարձի հանդէսն այստեղ Թիֆլիսի հայութեան մէջը կատա-
րելու պատենութիւնն ունինք:

Առ ոտս Վեհափառ Տեառնդ ենք արկանում մեր որդիական
սրտագին շնորհաւորութիւնը, Հայցելով Բարձրեալ Աստուծուց, որ
Քեզ առողջ և երկար կեանք պարգևէ, որ ղօրավիզն լինի Քեզ Քո
ծանր խաչը առաքելական արիութեամբ դէպի բարոյական մեծ
յաղթանակը. տանելու Քո բազմաշարժար եկեղեցու պայծառու-
թեան և Քո բազմատանջ ժողովրդի փրկութեան ու վերակենդա-
նութեան համար:

Հիմնադիր Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան բժշկա-
պետ Բագարատ Նաւասարդեան

Հայուհեաց Բարեգործական Ընկ. նախագ. Հ. Մարտիրոսեան

Հայոց Ազգային Կենտրոնական Բիւրօի փոխ-նախագահ՝ Յով-
հաննէս Սպէնդիարեան

Հայոց Ազգապրական Ընկեր.	Մն. Խունունց Հ. Մարտիրոսեան Ե. Լալայեան
Նպաստամատոյց Ընկեր. Վարչ. փոխ-նախագ. Ա. Մ. Եզեկեան	
Դրամատիկական Ընկեր. Խորհուրդ Խ. Աֆրիկեան	

Փոխ-նախագահ Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. Ա. Մելիք-Ազարեան

Հայոց Երաժշտական Ընկեր. { Նունէ Դոլուխանեան
Իւլիա Սպենդիարեան

Տփլիսի Հայոց վաճառականների աւագի պաշտօնակատար Սարգիս Կափիեանց

Վրաստանի ու Իմերէթի Հայոց թեմի հայ եկեղեցական-ծխական դպրոցների թեմական տեսուչ Ստ. Տէր Աւետիքեան

Գրական-Գեղարուեստական Սալոն Տ. Նազարեան

Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի նախագահի տեղ փոխ նախագ. բժշկապետ Բաղարատ Նաւասարդեան
Միքայէլ Արամեանց

Ներսիսեան Հ. Հոգևոր Դպրանոց Սահակ Լիսիցեան

Հրատապ Սփովանք Մայր Հայաստանցիներին ընդ հովանեաւ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց Տ. Նազարեան

Թիֆլիսի մեղչանների աւագ Վ. Առաքելեան

Թիֆլիսի Հայոց Դրամատիկական խմբակցութեան կողմից՝ Յովհաննէս Մալխասեան

Մինաս Բերբերեան, փ. Հիւպատոս Սպանիայի Թիֆլիսում.

Գայիանեան Օրիորդաց Դպրոցի Հոգարարձութեան անդամ Ս. Մուրադբէգեան

Աղզագրական Հանդէս՝ Ե. Լալայեան

«Մշակ», «Աղբիւր», { Վ. Հայկազն, Սոփիա Դանիէլ բէգ.
Ք. Թումեան

«Տարազ», «ՎանՏոսպ» { Տ. Նազարեան խմբագիր-հրատարակիչ
«Աղբիւր-Տարազի», «Վան-Տոսպի».

Ա. Դարբինեան

«Հովիտ»ի խմբագրութեան կողմից եզնիկ աւագ քհն. Երզնկեան
Թիֆլիսի հայ-ծխական դպրոցների կողմից Սահակ քահանայ Սահակեանց,

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընդունելութեան Յանձնաժողովի անդամներ՝

Մ. Արամեանց

Նունէ Դոլուխանեան

Սարգիս Կափիեանց

Ա. Մելիք-Ազարեանց

Սարգիս Տէր Օհանէսեանց

Ա. Մ. Եղեկեան

Մն. Խունուհնց

Ե. Լալայեան

Վ. Առաքելեանց

Յ. Շահնազարեան

Հ. Մարտիրոսեան

Տ. Նազարեան

Ուղերձը մատուցուեցաւ Ն. Սրբութեան մի շքեղ գրապանակի մէջ, զարդարուած արծաթեայ երեսով, որի ձախ անկիւնում գտնուում է Հայրապետական թագ-զա-

ւաղան-խաչի ոսկեզօծ նշանը և արծաթապատ տախտակի վերայ փորագրուած է.

«Նորին Ս. Օծութեան Վեհափառ Գէորգ ե. Կաթողիկոսին, զահակալութեան ե. տարեդարձին, Թիֆլիսի Աղփային հաստատութիւններէց. Վարդափառ 1916 թ.»:

Վ. Հայրապետը շնորհակալութիւն յայտնեց Ուղերձ մատուցանողներին, օրհնեց բոլոր ներկայ եղողներին և առանձնացաւ հանգստանալու:

Հիւրերը հիւրասիրուեցան սուրճ ու շօկօլադով, պաղպաղակով, քաղցրաւենիք ու թխուածքներով, զով հանքային ջրերով: Հիւրերից ոմանք ընդունելութեան Յանձնաժողովի կողմից հրաւիրուեցան ճաշի:

* * *

Ժամը 3 և 15 րոպէին Ն. Սրբութեան այցելեց Կովկասեան Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Գեն.-լէյտ. իշխան Օրլով, անձամբ իւր շնորհաւորութիւնները մատուցանելու Ն. Վեհափառութեան Նորա Օծման ե. տարեդարձի առթիւ: Ն. Սրբութեան մօտ մնաց բարձր հիւրը 50 րոպէի չափ:

Իշխան Օրլով կրում էր, այդ օրը Ն. Սրբութեան կողմից իշխանին յատուկ նուէր յղած Հայրապետական Թագ-Գաւազան-Խաչի զոհարազարդ նշանը:

Ն. Սրբութեան հաճելի եղաւ նոյնպիսի նշանի արժանացնել իւր Դիւանապետ Տ. Տիրայր Ժ. վարդապետին:

* * *

Ն. Սրբութեան Օծման ե. Տարեդարձի առթիւ Հայութիւնը ամէն վայրերից շնորհաւորական հեռագրներով, նամակներով, զրութիւններով Ն. Վեհափառութեան իրենց ջերմ որդիական ցգացումները յայտնեցին: Ստացուած էին նաև հեռագրներ Մ. Աթոռի միաբանական Ուխտից, Թեմակալ առաջնորդներից, Փոխանորդներից ևն:

Ն. Սրբութիւնը հաճեց իւր օրհնութիւնը շնորհել

ամենքին հեռագրով և Հայրապետական Դիւանի շնորհակալական դրութիւններով, օրհնելով ամենքին նոցա որդիական սիրոյ զգացումների համար:

* *

Յուլիսի 18-ին Ն. Սրբութիւնը բարեհաճեց հրամայել իրենց պաշտօնավայրերը վերադառնալ Երևանի փ. թեմակ. Տ. Խորեն եպիսկոպոսին, Ատրպատականի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսին և Ճեմարանի Տեսուչ Տ. Գարեգին Տ. վարդապետին, որոնք և նոյն երեկոյեան զնացքով մեկնեցին:

* *

Յուլիս 19 ին Ն. Սրբութիւնը բարեհաճեց վեհարանից տեղափոխուիլ Կրճանխում գտնուող Մանթաշեան եղբայրների ամարանոցը, ուր աւելի հովասուն և առողջարար օդ է:

Մանթաշեան եղբայրներն իրենց Կառավարչի պր. Գ. Կ. Շահումեանի միջոցով նախօրօք խնդրել էին Ն. Սրբութեան հաճել իրենց ամարանոցը տեղափոխուիլ և իրենց հիւրասիրութիւնը վայելել, որչափ ժամանակ հաճելի կլինի Ն. Սրբութեան:

Վեհ. Հայրապետի հետ փոխադրուեցան նաև իւր շքախմբի անդամները — Դիւանապետ Տ. Տիրայր Տ. վարդապետ, Սինօդի անդամ Տ. Գէորգ վարդապետ և Աղէքսանդրապօլի փոխանորդ Տ. Արտակ վարդապետ:

* *

Յուլիս 22 ին, Ամարանոցում, ներկայանալու բաղդունեցաւ Ն. Սրբութեան Տփլիսի վաճառականների Դրամատան Տեսուչ և Սպանիական փոխ-Հիւպատոս Մինաս Բերբերեան, ընտանիքով և «Кавказское Слово» ի խմբագիր Իւ. Փ. Սեմեօնով:

* *

Չնայելով Մանթաշեանի ամարանոցը քաղաքից բաւական հեռու լինելուն, Հայ ազգաբնակչութեան ներկայա-

ցուցիչներն ամենայն օր այցելում են Ն. Սրբութեան, հոգ տանելով Վեհափառ Հիւրին ամենայն զիւրութիւններ տալու համար:

Մի քանի անգամ բազմ ունեցան ներկայանալու Ն. Սրբութեան պ. պ. Աղէքսանդր Մելիք-Ազարեան, Նիկողայ Ան. Քալանթարեան, Տիկ. Քալանթարեան, Տիկ. Ն. Դօրուխանեան, Տիկ. Բերբերեան, բժշկալ. Բ. Նաւասարդեան, Պ. Մ. Բերբերեան, Ա. Եղեկեան, Մն. Խունունց, Եր. Լալայեան, բժ. Յ. Զաւրեան, Տիկ. Իստամանեան, Դ. Զաւրեան, Տ. Նազարեան և այլն:

Զնայելով որ Ն. Սրբութիւնը համարում էր Եղբ. Մանթաշեանների հիւրը, այնուամենայնիւ ընդունելութեան Յանձնաժողովի և՛ նախագահը, և՛ անդամները պարտք էին համարում հերթապահութիւն անել, ամենայն օր այցելել Ն. Սրբութեան, կտրոյով պտոյտի հանել Ն. Սրբութեան և յուլիս 26-ին, նոյն իսկ, յատուկ հոգածութեամբ պ. Նազարեանի՝ լուսապատկելների մի երեկոյթ կազմել:

* *

*

Յուլիս 22-ին Ն. Սրբութեան բազմ ունեցաւ ներկայանալ Ն. Աղոնց, Պետրոգրադի համալսարանի պրիվատ-դոցենտ և հայ դպրութեան «վարդապետ» (doctor), որ զայիս էր Պետրոգրադից և պիտի անցնէր Ս. Էջմիածին հայաստանից բերած նոր ձեռագրների ուսումնասիրութեամբ զրադուելու:

* *

*

Նոյն օրը ներկայացաւ Ն. Սրբութեան երդուեալ հաւատարմատար Լևոն Մուշեղեան, որ զայիս էր Կարին կատարած իւր ճանապարհորդութիւնից:

* *

*

Յուլիսի 22-ին Ն. Սրբութիւնն ստացաւ Փարիզից, այնտեղ կազմուած «Մրանս-Հայկական» Միութիւնից հետեւալ հեռագիրը:

«Նորին Սրբութեան Գեորգ Ե. Կաթողիկոսին
ամենայն Հայոց

«Նորերս կազմակերպուած Պրանս-Հայկական և Հայ
ազգի Պրանսիացի բարեկամների Յանձնաժողովն ուղղում
է Ձերդ Սրբութեան իւր ամենաջերմ համակրութեան
զգացումները, ի դէմս քրիստոնէական հաւատով և քա-
ղաքակրթութեամբ զօրացած նահատակ և հերոսական
Հայաստանի և հաւաստիացնում է Ձեզ այն անձնուի-
րութեան մասին, որ տաժում է դէպի Հայ դժբաղդ և
ազնիւ ազգի դատը:

Լէյզ, նախկին նախարար, նախագահ Պատգամաւոր-
ների Դահլիճի արտաքին գործերի յանձնաժողովի:

Էտիէն Լամի, անդամ Պրանսիական Ակադեմիայի:

Փլանդէն, անդամ Մերակոյտի:

Կոմս դ'Սել, անդամ Մերակոյտի:

Գերնիէ, անդամ պատգամաւորների Դահլիճի, նախ-
կին Պետական Քարտուղար, նախագահ առևտրական նա-
ւատորմի:

Ռաֆայէլ Փօրթ Լէվի, անդամ Պրանսիական Ինստիտուտի:

Շլիմքերգեր, անդամ Ինստիտուտի:

Փօլէֆ Ռէյնսկ, նախկին պատգամաւոր:

Մէյյէ, ուսուցչապետ Collège de France-ի,

Բուրգինսոն, Ազգային լուսաւորութեան նախարար
Պէնլըվէի խորհրդարանի Դիւանապետ և նախագահ օտար
յարձակումների դէմ Ազգային պաշտպանութեան Յանձ-
նաժողովի:

Էսկոֆիէ, Credit Lyonnais-ի ղեկավար:

Դաքիէլ Մուրէ, Կոմպիէնի պալատի վերահսկիչ:

Անրի Կուլօն, Դատական Պալատի փաստաբան:

Ռընէ դը-Շափան', Յանձնաժողովիս ընդհ. քարտու-
ղար, խմբագիր Franco-Etrangère հանդիսի:

Նորին Սրբութիւնը բարեհաճեց իւր զոհունակու-

Թիւնն ու օրհնութիւնը յայտնել Յանձնաժողովի բոլոր անդամներին հետեւեալ հեռագրով.

«Փարիզ,

«Ֆրանս-Հայկական Յանձնաժողովի ընդհանուր քարտուղար, Franco—Etrangère հանդիսի խմբագիր Ռենէ դը-Շավան'ին, 14 Place Dauphine.

«Խնդրում է յանձնել Յանձնաժողովի նախագահին.

«Խիստ մերձ եմ ընդունում որտիս Ֆրանս-Հայկական Յանձնաժողովի ականաւոր անդամների առ իմ ազդը ցոյց տուած ջերմագին համակրութեան արտայայտութիւնը: Օրհնում եմ Յանձնաժողովը և իւր բոլոր անդամները և մաղթում կատարեալ յաջողութիւն գործին, որ ընդգրկել են նոքա վեհանձնօրէն: Յոյս եմ տածում, որ նոցա անձնուիրութիւնը, իւր համակրութիւնների պատճառով անգթաբար մարտիրոսացած Հայաստանի դատին՝ կհասնի իրենց առաջադրած նպատակին և իմ ժողովուրդը առ յաւէտ երախտաճանաչ կլինի նոցա, որոնք քրիստոնէաբար օգնութեան հասան նորան իւր թշուառութեանց մէջ և լաւագոյն ապագայի յոյս ներշնչեցին նորան:

«Կրկին իմ օրհնութիւնս ամենքին: Աղօթում եմ առ Ամենաբարձրեալն Ֆրանսիայի և Դաշնակիցների յաղթութեան համար:

ԳԷՈՐԳ Ե.

Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

* * *

Յուլիս 23-ին Ն. Վեհափութեան Պատուիրակ Պօղոս Նուբար Փաշան հեռագրում է Փարիզից.

«Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ին,
յեջմիածին.

«Երջանիկ եմ զգում ինձ յայտնելով Ձերդ Սրբութեան, որ բացառապէս Հայութեան բարեկամներից, Խորհրդարանի ականաւոր և Ֆրանսիական Ինստիտուտի

անդամներից մօտ օրերս կազմակերպուեցաւ մի Յանձնա-
 ժողով, որի նպատակն է Հայութեան դատի պաշտպա-
 նութիւնը:

Նուբար:

* * *

Այս Յանձնաժողովն ունի հետեւեալ կազմը.

Պատուակալ նախագահներ —

Ժօրժ Կլէմանսօ, անդամ Մերակոյտի, նախարարների
 խորհրդի նախկին նախագահ, Մերակոյտի արտաքին գոր-
 ծերի Յանձնաժողովի նախագահ.

Դրնի Կօշէն, նախարար.

Անատօլ Փրանս, անդամ Ֆրանսիական Ակադեմիայի.
 Ե. Համի, Անդամ Ֆրանսիական Ակադեմիայի.

Ժօրժ Լէյզ, անդամ Խորհրդարանի, նախկին նախա-
 րար, Պատգամաւորների խորհրդարանի արտաքին գործերի
 Յանձնաժողովի նախագահ.

Պ. Պէնլէվէ, նախարար ազգային լուսաւորութեան:

Վարչութեան կազմը.

Նախագահներ. —

Հուի Ռէմօ, — Դեսպան, Իրաւարանական համալսա-
 րանի ուսուցչապետ.

Ալբեր Սարրօ, Պատգամաւոր, նախկին նախարար ազ-
 գային լուսաւորութեան.

Փոխ-նախագահներ. —

Էտիէն Փլանդէն, Անդամ Մերակոյտի, Արտաքին գոր-
 ծերի Յանձնաժողովի.

Գերնիէ, Պատգամաւոր, Լիլլի համալսարանի Իրա-
 ւարանական համալսարանի ուսուցչապետ, Արտաքին գոր-
 ծերի Յանձնաժողովի անդամ.

Մէյլէ, Collège de France-ի ուսուցչապետ.

Ժօզէֆ Ռայնալ, նախկին պատգամաւոր:

Ընդհանուր ֆարսուղար. —

Ռընէ դը-Շապան, հիմնադիր Յանձնաժողովի.

Օգնական ֆարսուղարի. —

Մ. Փ. Մակլէր Արեւելեան լեզուների Դպրոցի Հայ
 լեզուի ուսուցչապետ.

Գանձապահ. —

Մ. Էսկոֆիէ, Credit Lyonnais-ի ղեկավար:

Քաղաքական եւ Տնտեսական յարաբերութեան
անդամներ. —

Կոմս դ'Օնէ, Անդամ Ծերակոյտի,

Ե. Կարնո, Ծովային երթևեկութեանց պետ.

Անդրէ Շէրադամ, Հրապարակախօս,

Պօլ' Էսկուզիէ, Սէնայի պատգամաւոր, փոխ-նախա-
գահ, Արտաքին գործերի Յանձնաժողովի,

Փրանկլէն — Բուլլօն, Պատգամաւոր, փոխ-նախագահ

Արտաքին գործերի Յանձնաժողովի,

Բարոն Հօտինլեր, Banque Ottoman-ի վարչութեան
խորհրդի նախագահ,

Լուի Մարտէն, Անդամ Ծերակոյտի, Անդամ Արտաքին
գործերի Յանձնաժողովի,

Բանկ Միրաբօ, մի վարիչ,

Ընկ. Պաքէ, մի վարիչ,

Ռընէ Պինօն, Հրապարակախօս,

Դը-Վօրէալ, «Phares Ottomans»-ի վարիչ,

Վլաստօ, Comptoir d'Escompte-ի Հիմնադիր:

Մտաւորական յարաբերութիւնների անդամներ.

Պ. Պօլ' Ադամ, գրականագէտ.

Տիկ. Ս. Անդրէ, A. F. E. ընկ. Յանձնաժողովի նախագահ.

Պ. Պօլ' Բուայյէ, Արևելեան լեզուների դպրոցի ղեկավար.

Հ. Շարմիտան, Oeuvre d'Orient-ի ղեկավար.

Պ. Անրի Կուլօն, Փարիզի Դատական Պալատի փաս-
տաբան.

» Շարլ Դիլ', Անդամ «Արձանագրութիւնների եւ գե-
ղեցիկ Դպրութեան Ակադեմիայի».

» Ե. Դումերգ, Մօնղօբանի Աստուածաբանական
Համալսարանի վերատեսուչ.

» Ժ. Փինօ, «Revue»-ի խմբագրապետ.

Տիկ. Ժ. Գօլի, գրականագէտ.

Պ. Ե. Հերոլ'դ, «Մարդկային իրաւունքների ընկերակ-
ցութեան» փոխ-նախագահ.

- » Լ. Լալուա, Երաժշտական քննադատ.
- Օր. Մենար-դ'Օրիան.
- Պ. Գալորիէլ Մուրէ, Արուեստից քննադատ, Կոմպիէնի պալատի վերահսկիչ.
- » Ռըրիլիօ, ուսուցչապետ Collège de France-ի.
- » Ե. Սէնար, անդամ «Académie des Inscriptions et Belles Lettres»-ի.
- » Շիւմբերգեր, » » » » » » »
- » Գ. Սիլլէս, — ուսուցչապետ Սորբոնի Համալսարանի:

* *

Յուլիս 24-ին Ն. Սրբութիւնը բարեհաճեց օրհնութեան և զօհունակութեան Կոնդակ շնորհել բոլոր այն հաստատութիւններին և ներկայացուցիչներին, որոնք իւր Օճման Ե. տարեգարձի օրը ուղերձ էին մատուցել:

Կոնդակը տպագրուում է «Արարատ»-ի այս համարի մէջ:

* *

Յուլիս 26-ին Ն. Սրբութեան յանձնարարութեամբ Հայրապետական Դիւանի պետ Տ. Տիրայր Ժ. վարդապետն եղաւ այցելութեամբ Կովկասեան Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական իշխան Օրլովի մօտ:

* *

Ն. Կ. Բ. Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական գեն. Լէյտ. իշխան Օրլով Ն. Սրբութեան Դիւանապետին յանձնեց մի գրութիւն, խնդրելով մատուցանել այն Ն. Վեհափառութեան:

Այդ գրութեամբ իշխան Օրլովը զեկուցանելով Ն. Սրբութեան, որ Բիթլիսի շրջանում քրդերը Հայերի դէմ յարձակում դործած լինելով, մի յատուկ յանձնաժողով Ն. Կ. Բ. Տ. Փոխարքայի ադիւտանդ իշխան Շչերբատովի նախագահութեամբ, պարտաւորութիւն ունի քննելու ելնել այդ պարագան, ուստի և խնդրում է Ն. Սրբութեան իւր կողմից ևս հաճիլ նշանակել երկու ներկայացուցիչ

այդ Յանձնաժողովի քննութիւններին մասնակցելու, իբրեւ անդամներ նոյն Յանձնաժողովի:

Ն. Սրբութեան կողմից իբրեւ անդամ այդ քննիչ Յանձնաժողովի նշանակուեցան՝ Կովկասեան ճակատի զինուորական քահանայ, իրաւաբանական կրթութեամբ, Տ. Ռուբէն քահանայ Բէկզիւլեան և երդուեալ հաւատարմատար պ. Լեոն Մուշեղեան:

Այս մասին յայտնուեցաւ ի տեղեկութիւն իշխան Օրլովին:

* *

Յուլիս 27-ին Ն. Կ. Բարձրութիւն Օգոստոսիառ Փոխարքայի անուանակոչութեան տօնի օրը Ն. Սրբութիւնը շնորհաւորեց Մեծ-իշխան Նիկոլայ Նիկոլաւիչին հետեւեալ հեռագրով.

«Կոչոր.

«Օգոստոսիառ Մեծ իշխան, գեներալ-ատիւտանդ Նիկոլայ Նիկոլաւիչին.

«Ձերդ Կայսերական Բարձրութեան անուանակոչութեան տօնի օրը ի բոլոր արտէ յայտնում եմ Ձեզ իմ անկեղծ շնորհաւորութիւններս, աղօթելով Ամենակարողին՝ շնորհել Ձեզ ոյժ և առողջութիւն, կառավարելու բազմացեղ ազգարնակութեամբ երկիրը, ի բարօրութիւն ընդհանուրի:

«Օրհնում եմ Ձերդ Կայսերական Բարձրութիւնը՝ ինչպէս և Ձեր բարեպաշտ ամուսին Մեծ-իշխանուհի Անաստասիա Նիկոլաւնային, արևշատութեան բարեմաղթութիւններով:

Գ Է Ո Ր Գ Ե.

Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ-իշխան Փոխարքան հաճել էր հեռագրել Ն. Սրբութեան.

«Թիմլիս.

«Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

«Ընդունեցէք իմ արտադին շնորհակալութիւններս Ձեր

աղօթքների, շնորհաւորութիւնների և սրտայոյղ բարեմաղթութիւնների համար:

Գեներալ ասիւսանդ
Ն Ի Կ Ո Լ Ա ՅՁ:

* *
*

Յուլիս 27-ին Ն. Սրբութեան ներկայացաւ Տփսիսի քաղաքագլխի պաշտօնակատար իշխան Ա. Մ. Արղութեան-երկայնաբազուկ:

* *
*

Յուլիս 28-ին Ն. Սրբութեան ներկայացաւ Փոխարքայի Դիւանատան Կառավարչի օգնական Կօլօգրիժօվը և անձամբ յանձնեց Տ. Փոխարքայի պատասխանը Վեհ. Հայրապետի Ն. Կ. Բարձրութեան ուղղած զրութեան:

* *
*

Նոյն օրը, հինգշաբթի, ճաշից յետոյ Ն. Սրբութիւնը մեկնեց ժամը 3, 20 բողէին Կոջոր ամարանոցը, Տ. Փոխարքայի յատուկ հրաւերով և հրաժեշտի տեսակցութիւն ունենալու նպատակով:

Կոջոր հասաւ Ն. Սրբութիւնը 5 ժ. 20 բողէին, ուղեկցութեամբ իւր Դիւանապետ Տ. Տիրայր Ժ. վարդապետի և Սինօղի անդամ Տ. Գէորգ վարդապետի, Ն. Կ. Բ. Մեծ-իշխանն ընդունեց իւր Հիւրին միայնակ, իւր առանձնատեղեակում:

Ընդունելութիւնը եղել է շատ սիրալիր, սրտագին և յուսադրական: Ն. Սրբութիւնը շատ դոհ սրտով իւր հրաժեշտի ողջոյնն ու օրհնութիւնը շնորհելով Մեծ-իշխանին և Մեծ-իշխանուհուն, մեկնեց իւր ամարանոցը:

Ն. Կ. Բարձրութիւնը ճանապարհ դրեց Ն. Սրբութեան մինչև իւր քնակարանի արտաքին դուռը, ուր և Ն. Սրբութեան կողմից ներկայացուեցան Մեծ-իշխանին իւր հետևորդները, իսկ Ն. Կ. Բարձրութիւնը ներկայացրեց իւր ատիւտանդ իշխան Շչերբատովին:

Ն. Կ. Բարձրութեան կողմից Վեհ. Հայրապետի տրամադրութեան ասկէր դրուած իւր անձնակազմը (automobile):

* *

Երեկոյեան, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետի Ընդունելութեան Յանձնաժողովը նիստ ունեցաւ, ուր որոշումներ եղան Ն. Սրբութեան Մ. Աթոռ վերադառնալու կարգադրութիւնների առթիւ:

* *

Ուրբաթ, Յուլիս 29-ին, երեկոյեան ժամը 7¹/₂-ին Ն. Սրբութիւնը բարեհաճեց Կրճանիսի, Մանթաշեան եղբայրների, ամարանոցից վերադառնալ Վեհարան:

Ն. Սրբութեան առաջնորդում էր ընդունելութեան Յանձնաժողովի նախագահ Տ. Նաղարեանի կառքը: Նորին Վեհափառութեան հետեւում էին իւր շքախմբի անդամների և Ընդունելութեան Յանձ. միւս անդամների կառքերը:

Վեհարանի դրան առաջ Ն. Սրբութեան ընդունեցին Ընդունելութեան Յանձնաժողովի անդամները և առաջնորդեցին Վեհիս Իւր առանձնաթէնեակը, հանգստանալու և թէյ վայելելու մինչև կայարան մեկնելը:

* *

Մանթաշեանների ամարանոցից մեկնելուց առաջ Ն. Սրբութեան հրաժեշտի ողջոյնի եկաւ Կովկասեան Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական գեն. լէյտ. իշխան Վ. Ն. Սրբով, ցերեկուայ 4 ժ. 27 րոպէին, ունենալով կրճին Ն. Սրբութեան նուէրը՝ Հայրապետական Թագ-խաչ-գաւազանի շողակնեայ նշանը: Իշխանը մնաց Ն. Սրբութեան մօտ 40 րոպէ, շատ սիրալիր ընդունելութիւն գտնելով Ն. Վեհափառութեան կողմից: Հրաժեշտ առնելով և Ն. Սրբութեան աջն առնելով Նորին Պայծառափայլութիւնը յայտնեց, որ պարտք կը համարէ Ն. Սրբութեան ողջերթի գալ կայարան:

* *

Վեհաբանում ն. Սրբութեան ներկայացան Տփլիսի հոգևորականութիւնը, ազգային-եկեղեցական և հասարակական բոլոր հաստատութիւնների, ինչպէս և վաճառականների ներկայացուցիչները և ն. Սրբութեան օրհնութիւնն առանձն

ն. Սրբութիւնը գիշերուայ 10 ժամին օրհնելով Վեհաբանում ժողովուած հայ ժողովրդին, որ մեծ բաղմութեամբ եկել էր Հայրապետի օրհնութիւնն ստանալու, շնայելով խիստ անձրևին, բարեհաճեց մեկնել երկաթուղու կայարան, վեց ձի լծած փակ կառքով, նոյնպիսի շքով, ինչպէս քաղաք էր մտած: Առաջևից գնում էր գաւաղանակիր Տ. Տիրայր ծ. վարդապետի և ընդունելութեան Յանձնաժողովի նախագահ պ. Տ. Նազարեանի կառքը, ապա Հայրապետական Խաչ և գաւաղան կրող Տ. Եղնիկ ա. քհյ. երզնկեանի և Տ. Սարգիս ա. քհյ. Շիրոյեանի կառքը, որին հետևում էր ն. Սրբութեան կառքը, ապա Տփլիսի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի կառքը, Սինօղի անդամ Տ. Գէորգ և Աղէքսանդրոպոլի փոխանորդ Տ. Արտակ վարդապետների կառքը, ընդունելութեան Յանձնաժողովի անդամներ պ. պ. Աղէքս. Մելիք-Աղարեանի, բժշկապետ Բ. Նաւասարդեանի, Աւետիք Եղեկեանի, տիկնայք Հ. Մարտիրոսեանի և ն. Դօլուխանեանի, քաղաքային վարչութեան անդամ Միք. Աթարէկեանի, փոխարքայի առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ և գաղթականութեան ընդհ. ղեկավարի-օգնական Լեոն Եւանդուլեանի, վաճառականների աւագի պաշտ. Ս. Գ. Կաֆեանի, Ներս. դպրոցի տեսուչ Յովս. Խունուկցի, Սպանիական հիւպատոս Մինաս Բերբերեանի, Աղգաղր. Ընկ. կողմից եր. Լալայեանի և այլոց երկար շարք կառքերը: Շքերթը նոյն փողոցներով, որով քաղաք էր ժամանել, հասաւ կայարան, ուր ն. Սրբութեան դիմաւորեց ընդունելութեան Յանձնաժողովի անդամ Տ. Գիւտ ա. քհյ. Աղանեան միւս անդամների և քահանայական դասի հետ:

ն. Վեհափառութիւնն առաջնորդուեցաւ Արքայական ընդունելութեան սրահը, որ լիքն էր բարձրաստիճան Պե-

տական պաշտօնեաներով, — Տփլիսի նահանգապետ Ֆլի-
գելադիւտ. Ա. Ն. Մանդրլիա, Փոխարքայի զիւանաւորան
կառավարչի օգն. Ա. Ա. Կօլադրիժով, ազնուականների
պարագլուխ Իշխան Կ. Ն. Աբխազի, քաղաքային վարչու-
թեան կողմից, քաղաքագլխի բացակայութեան պատճառով,
քաղաք. վարչ. անդամ Միք. Աթաբէկեան, Անդրկովկա-
սեան երկաթուղիների ընդհ. պետ զեն. մայ., Ա. Դ. Գէս-
կէտ և իւր օգնականը, ոստիկանապետ՝ զնտապետ Զդանովս-
կիյ, Թիֆլիսի երկաթուղային գծի ընդ. ճարտարապետ Վ.
Ի. Կէնգէ, մէշչանների պարագլուխ Վ. Ի. Առաքելեան, ար-
հեստաւորների աւագ Պ. Բարսեղեան, հայ ազգային-
կրթական, բարեգործական, քաղաքակրթական և այլ հաս-
տատութիւնների ներկայացուցիչներ, տիկիներ, օրիորդներ
և ժողովրդի ստուար բազմութիւն:

Վեհ. Հայրապետն առանձնացաւ արքայական ընդու-
նելութեան առանձնատենեակը, ուր նորին Սրբութեան
հետզհետէ ներկայացան հայ զենեւալ բժշկապետ Միք.
Շահպարտեան, իւր շքազգեստով և ժապաւէնով: Ապա
Ն. Սրբութեան ներկայացրեց Տ. Դիւանապետը Իշխան
Կ. Ն. Աբխազէին, որ Ն. Սրբութեան աջն առնելով ասաց, որ
«եկել է ողջերթ մաղթելու Ն. Սրբութեան իւր և իւր ազ-
գի՝ Վրացիների կողմից և խնդրում է, որ Ն. Սրբութիւնը
իւր աղօթքների մէջ չմոռանայ և Վրացիներին»: Ն. Սրբու-
թիւնը օրհնեց Իշխանին, պատասխանելով, որ «Ամենայն
սիրով տալիս է իւր օրհնութիւնը վրաց ազնուականու-
թեան ներկայացուցչին, ինչպէս և ամբողջ ազնուականու-
թեան. երբէք չէ մոռացած իւր աղօթքների մէջ վրացի-
ներին, որոնց յարգում և սիրում է և որոնց յորդորում
է սիրով և յարգանքով վերաբերուել զէպի միմեանց և
զէպի ամենքը, որ բարոյական և տնտեսական բարգաւաճ-
ման և համերաշխ սիրոյ աղբիւրն է»: Այնուհետև Ն.
Սրբութեան ներկայացան Տփլիսի նահանգապետ Ֆլիգ-
ադիւտ. Ա. Ն. Մանդրլիա և երկաթուղիների ընդ. կա-
ռավարիչ զեն. մայ. Ա. Դ. Գեսկէտ:

Մի քանի րոպէից յետոյ ժամանեց Տ. Փոխարքայի

քաղաքացիական մասի օգնական գեն. լէյտ. Իշխան Վ. Ն. Իշխան Օրլով, հետև ունենալով նոր գրաւած երկիրներ ընդհ. նահանգապետ գեն.—լէյտ. Ն. Ն. Պէշկովին, որոնց Ն. Սրբութիւնն ընդունեց իւր առանձնասենեակում:

Ն. Սրբութիւնը ելնելով և դահլիճում ընդունելով սպասող հասարակութեանն, օրհնեց ամենքին և իշխան Օրլովի և միւս բարձրաստիճան պաշտօնեաների ուղեկցութեան առաջնորդուեցաւ իւր սալոն—վարդնր: Ն. Վեհափառութիւնը կրկին օրհնելով իշխան Օրլովին նորա որդեկան հրաժեշտի համար, ինչպէս և նորա ուղեկիցներին, թնցաւ իւր առանձնասենեակ բաժնեկր:

Մինչև գնացքի շարժուելը, երկաթուղու կամարակապի տակ մնաց կանգնած իշխան Օրլովը, շրջապատուած գեներալներով, և բարձրաստիճան անձերով, ողջերթի վերջին հրաժեշտ տալով Հայոց Հայրապետին, որ եկել էր իւր որդիների տառապանքները թեթևացնելու ծանր զործի համար և որ դո՛հ և յուսադրուած որտով հեռացաւ Տփլիսից, մնալով այնտեղ 35 օր:

* * *

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Տփլիսի թեմի սրբ. առաջնորդը, որ պիտի հրաժեշտի օրհնութիւն ստանալ Սանահին կայարանում, իւր շքախմբի անդամներ՝ Դիւանապետ և Սինօգի անդամ Տ. Տիրայր Ժ. վարդապետ, Աղէքսանդրապօլի փոխանորդ Տ. Արտակ վարդապետ, Սինօգի անդամ Տ. Դէորդ վարդապետ, ընդունելութեան Յանձնաժողովի անդամներից՝ նախագահ Տիգրան Նազարեան, բժշկապետ Բ. Նաւասարդեան, Եր. Լալայեան, որոնք Վեհափառ Հայրապետի հրամանով ուղեկցեցին մինչև Նաւթլուխ կայարանը և Տ. Մեսրոպ Ա. քահանայ Մեկեան, որ ուղեկցեց մինչև Ղարաքիլիսս կայարանը:

* * *

Նաւթլուխ կայարանում Ն. Սրբութիւնը իւր օրհնութիւնը տուեց և շնորհակալիքը յայտնեց թէ՛ ընդունելութեան Յանձնաժողովի կողմից ուղեկցող անդամներին

և թէ ամենքին, սրանք ամենայն հոգածութիւն և խնամք տարան և ոչինչ չխնայեցին Ն. Սրբութեան ընդունելութեան և հիւրասիրութեան համար:

Ն. Սրբութեան ընդունելութեան Յանձնաժողովի անդամներն էին, նախագահս պր. Տիգրան Նաղարեան, և անդամներ — պ. պ. Աթուրէկեան Միքայէլ, Աւան-Իւզրաշեան Դաւիթ Խան Սալնախի, Արամեան Միքայէլ, Աղանեան Տ. Դիւտ ա. քահանայ, Աբաղեան Յովսէփ, Աղաբաբ Յակոբ, Առաքելեան Համբարձում, Առաքելեան Բարսեղ, Աֆրիկեան Խաչատուր, Բարսեղեան Յ., Բաղդասարեան Արամ, Դէփոյեան Պ., Դօլուխանեան Տիկ. Նունէ, Եղեկեան Աւետիք, Եւանգուլեան Լեոն, Եսայեան Սարգիս, Հալայեան Երուանդ, Խալաթեան Յ., Խունունց Մնացական, Ծատուրեան Գէորգ, Կաֆեան Սարգիս, Մարտիրոսեան Տիկ. Հայկանոյշ, Մաղմանեան Սարգիս, Մարտիրոսեան Մնացական, Մելիք-Աղաբեան Աղէքսանդր, Մելիք-Բախտամեան Յակոբ, Մուրադբէկեան Սարգիս, Յարութիւնեան Սամսոն, Յարութիւնեան Տիկ. Մարիամ, Յարութիւնեան Տիկ. Երանուհի, Յարութիւնեան Իսահակ, Նաւասարդեան Բժշկապետ Բազրատ, Շահնազարաան Յակոբ, Պօղոսեան Աղէքսանդր, Ստեփանեան Ա., Սաֆարեան, Ա., Սէյլանեան Յ., Տ. Զաքարեան Գ., Տէր Ստեփանեան Գ., Տէր Յովհաննիսեան Լեոն, Տէր Յովհաննիսեան Սարգիս, Փիրալեան Յարութիւն և Քալանթարեան Անտոն:

Յանձնաժողովը բաժանուած էր երեք բաժնի, — ելեմտից, տնտեսական և բուն ընդունելութեան:

Յուլիս 30, առաւօտեան ժամը 8-ին, Ն. Վեհափառութեան զնացքը կանգ առաւ Ղարաքիլիսա աւանի կայարանում:

Մինչև Հայրապետական զնացքի ժամանելը կայարան էին ժողովուել Աւանի ժողովուրդը, դպրոցական աշակերտաշակերտուհիները, իրենց ուսուցիչ-ուսուցչուհիների հետ, Որբանոցի փոքրիկ ապաստանեալները՝ իրենց դատարարակ-

չուհիների հետ: Մօտեցող գնացքն ընդունուեցաւ «կեցցէ»-
ների ձայներով:

Դուրսն սպասող քահանայական դասը, դործակալ Տ.
Խորէն Ա. քահանայի առաջնորդութեամբ, դպրոցի հոգա-
բարձութիւնը, ուսուցիչները, ուսուցչուհիները և որբանոցի
կառավարիչներն արժանացան ն. Սրբութեան օրհնութեան՝
գնացքի ներսում: Ն. Սրբութիւնը հաճեց լուսամուտից օրհ-
նել խրոնուած ժողովուրդը, աշակերտութիւնը և որբերին:

Դպրոցական աշակերտները, խմբապետի առաջնոր-
դութեամբ, երգեցին մի քանի ազգային—ժողովրդական
երգեր, շատ ներդաշնակ և հաճելի, որ մեծ բաւականու-
թիւն պատճառեցին ն. Սրբութեան:

Գնացքը շարժուեցաւ, Թողնելով ն. Սրբութեան օրհ-
նութիւնը իւր հօտին և հետը տանելով «ի բերանոյ ման-
կանց» և ամենքի բարեմաղթութիւնները:

* *
*

Ղարաքիլիսայից ելնելու ժամանակ անձրեւը մանրա-
մաղ շաղում էր: Սակայն այդ հանգամանքը խանգարիչ
պարագայ չէր, որ հետեւեալ կայարաններում սպասող
հոգեորական դասը և ժողովուրդը սիրով ընդառաջէր իւր
հոգեոր Տիրոջը: Նալբանդ, Համամլու, Զաջուռ կայարան-
ներում հոգեորականութիւնը բաղդ ունեցաւ արժանանա-
լու ն. Սրբութեան Օրհնութիւն ու Ս. Աջն առնելու, իսկ
ժողովուրդին իւր օրհնութիւնը տալիս էր բաց լուսամուտից
Հայրապետը:

* *
*

Զաջուռ կայարանից սկսած մանրամաղ անձրեւը տեղի
տուեց արեւշող օրին, և բաւական զգացնող անժամանակ
զովքը.—Ռ. 70,—տեղի տալով Վեհ. Հայրապետի գնացքը
մտաւ Աղեքսանդրոպօլ ջերմ օդով և ջերմագին ըն-
դունելութեամբ:

Կայարանի առաջ ժողովրդի ահագին բազմութիւն էր
խոնուած, որոնց «կեցցէ»ների ձայնն առ ժամանակ մի
լուեցրին գնացքի դղորդը:

Դուրսն սպասում էին դպրոցական աշակերտութիւնը, իրենց ուսուցիչ-ուսուցչուհիներով, քաղաքի ներկայացուցիչները, բերդապահը, ընդունելութեան Բանձնաժողովի անդամները, Գնացքի մէջ Ն. Սրբութեան բարի-գալուստ մաղթեց, քաղաքագլխի հիւանդութեան պատճառով, քաղաքային վարչութեան անդամ պ. Պարսամեան, ձայնաւորների հետ։ Այնուհետեւ ներկայացան հայ հոգեօրականութիւնը, բերդապահը, գաւառապետը, պատգամաւորներ և քաղաքացիք։ Վեհ. Հայրապետը բարեհաճեց բաց լուսամուտից օրհնել դուրսն սպասող հաղարաւոր ժողովրդին, որոնք բաց-գլուխ լսելով Հայրապետական «Պահպանիչը», իրենց կողմից արեւշատութիւն մաղթեցին «կեցցէ»ների որոտով։

Վեհ. Հայրապետի լուսամուտի առաջ սպասում էր Արդութեան դպրոցի աշակերտուհիների երգեցիկ խումբը, որ մի քանի ներդաշնակ երգերով մեծ բաւականութիւն պատճառեց Վեհ. Հայրապետին։ Երեցփոխան Ա. Կարանեանի առաջնորդութեամբ երգեցիկ խմբի աշակերտուհիներն արժանացան Սրբ. Հայրապետի աջն առնելու շնորհին։

Կայարանում նախաճաշ էր պատրաստուած Ն. Վեհափառութեան և շքախմբի անդամների համար։ Ն. Սրբութիւնը հաճեց նախաճաշել իւր գնացքի ղահլիճում, իսկ շքախմբի անդամները կայարան իջան նախաճաշի։

Ժամը 1-ին ժողովրդեան «կեցցէ»ների ուղեկցութեամբ գնացքը սահեցաւ դէպի Մ. Աթոռ։

Գիշերը տեղած անձրևի շնորհիւ դէպի Արարատեան դաշտն իջնելն այնքան ևս զգալի չեղաւ տարուայ եղանակին յատուկ ջերմ ու տօթի նկատմամբ։

Իւրաքանչիւր կայարանում սպասող ժողովրդին իւր հայրական օրհնութիւնը տալով, Վեհ. Հայրապետը երեկոյեան ժամը 6⁵/₄ հասաւ Էջմիածնի կայարանը, ուր վաղօրօք հա-

սել էին Մ. Աթոռից Միաբանութեան ներկայացուցիչները և ապաստում էին Վ. Հայրապետի դալստեան: Ն. Սրբութեան ընդառաջ էին եկել Սինոդի աւագ-անդամ Տ. Յուսիկ արքեպիսկոպոս, Տ. Անանեա արքեպիսկոպոս՝ լուսարարապետ Մ. Տաճարի, Տ. Մատթէոս եպիսկոպոս՝ անդամ Սինոդի Ս. Էջմիածնի, Տ. Գարեգին Մ. վարդապետ՝ Տեսուչ Հոգևոր Ճեմարանի, Տ. Թադէոս վարդապետ՝ անդամ Վանական կառավարութեան և Տ. Վարդան վարդապետ՝ անդամ Տպարանական ժողովի:

Ն. Վեհափառութիւնն ընդունեց միաբանութեան ներկայացուցիչներին, որոնք բարի-գալուստ մաղթեցին Ն. Սրբութեան: Ապա ներկայացաւ Էջմիածնի գաւառապետ, Լ. Լ. Լէմերման:

Երեկոյեան ժամը 7-ին Ն. Սրբութիւնը հաճեց փակ կառք նստելով ուղևորուել Մ. Աթոռ, շրջապատուած պահակների պահսորդով: Առաջէից գնում էին պ. Գաւառապետը, ապա Խաչ և Գաւառան կրող վարդապետները, իսկ Վեհի կառքին հետևում էին Միաբանութեան անդամների և Ն. Սրբութեան շքախմբի անդամների կառքերը:

* * *

Ժամը 8^{1/2}-ին Ն. Սրբութեան կառքը կանգ առաւ Մայրավանքի զլխաւոր դարպասի առաջ, ուր ապաստում էր Ն. Վեհափառութեանն միաբանական ամբողջ ուխտը, Վաղարշապատի քահանայական դասը, Սինոդի դատախազ Փ. Կ. Մելիք-Օհանջանեան՝ Սինոդի ծառայողների հետ, ճեմարանի աշակերտութիւնն՝ իրենց դաստիարակների հետ, Մ. Աթոռի խնամքը վայելող որբերն՝ իրենց դաստիարակչուհիների հետ, գիւղի պատուաւոր անձերը, և ժողովրդի մեծ բազմութիւն:

Մ. Աթոռի զանգակների զողանջիւնի տակ, լուսնի շողերով պատած իջնող գիշերուայ, կիսամութի խորհրդաւորութեան մէջ Ն. Սրբութիւնը առաջնորդուելով Միաբանական ուխտի կողմից Մ. Տաճար, ծունկի եկաւ Միածնաէջի

Սեղանի առաջ և իւր կարճատեւ, սակայն հոգեբուղիս աղօթքները վերառաքեց Բարձրեալին, Տիրոջ Սեղանի առաջ դնելով այն ջանքերի, հոգսերի և մտորուն խոհերի, անքուն գիշերների երկունք արդիւնքն ու ելքը իւր ճանապարհորդութեան, որ կարող եղաւ Գերագոյնի առաջնորդող Բազմի ուղղութեանն հետեւելով ստանալ երկրի բարձր իշխանութեան ներկայացուցչից, իւր տառապող հօտի վշտերը, դառն վիճակը, նեղսակիր կեանքը դիւրացնելու և բարուոքելու համար:

Հոգով զօրացած Հայրապետն ելաւ իւր աղօթքից, զգացուած՝ Տաճարում իւր շուրջն եկած, իրենց հոգու և մարմնի աչքերով ամենքին խորապէս հետաքրքրող հարցերի գաղտնեաց քողը բարձրացնելու ձգտումով ժողովուած վտարանդի գաղթականութեանն օրհնելով «Պահպանիչ»-ով ելաւ Վեհարան:

Միաբանական ուխտը մնաց Վեհարանի աւագ—մուտքի առաջ, իսկ եպիսկոպոսական դասը առաջնորդեց Հայրապետին վերն՝ Իւր բնակարանը: Հայրապետը օրհնելով ամենքին, խաղաղութեամբ արձակեց ամենքին և իւր առանձնասենեակն անցաւ՝ հանգստանալու մարմնական և հազեկան ծանր աշխատանքից, որ Իւր հօտի կարիքը դրել էր նորա տարիքի տակ կբուող, այլ դեռ ևս առողջ և ուժեղ ուսերի վերայ:

* *

Մ. Աթոռ վերադառնալով, Սինօդի նոր նշանակուած անդամ Տ. Գէորգ վարդապետը մտաւ պաշտօնի օգոստոսի 1-ից:

* *

Եղբ. Օգն. Գլխաւոր կարգադիր Յանձնաժողովի նախտղա՝ Տ. Գարեգին Մ. վարդապետը ի նկատի ունենալով իւր անմիջական պարտաւորութիւնների սկսուելու շրջանի

ժողովներն, իբրև տեսուչ հոգևոր ձեմարանի, գրաւոր հրա-
ժարական ներկայացրած լինելով Ն. Սրբութեան Յուլիս
15-ին, խնդրել էր ազատ համարել իրեն Եղբ. Օգն. Նա-
խագահութիւնից:

Ն. Սրբութիւնը բարեհաճեց ազատ համարել Տ. Գա-
րեգին Մ. վարդապետին Եղբ. Օգն. Գլխաւոր և տեղական
Յանձնաժողովների նախագահութեան պաշտօնից և նորա
փոխարէն կարգել Սինօդի անդամ Տ. Գէորգ վարդապե-
տին, որ և պաշտօնի անցաւ Օգոստոս 1-ից:

* * *

Եղբ. Օգն. Գլխ. Կարգադիր Յանձնաժողովի Փ—նա-
խագահ Տ. Տիրայր Մ. վարդապետը, ծանրաբեռնուած
լինելով իւր պաշտօնների պարտաւորութեամբ, խնդրել էր
Ն. Սրբութեան հաճել ազատ համարել իրեն այդ պարտա-
ւորութիւնից:

Ն. Սրբութեան հաճելի եղաւ ընդունել նորա գրաւոր
հրաժարականը և նորա փոխարէն նշանակել Տ. Գիւտ ա-
բեղային, Օգոստոսի 2-ին:

* * *

Վանի, Բայազէտի, Մուշի, Բիթլիսի և շրջակայ վայ-
րերը առժամանակ անապահով լինելով այնտեղ եղած
հայութիւնը ստիպուած էր ժամանակաւորապէս թողնել իւր
քնակավայրերը և նորից գաղթականութեան ցուպն առնել
իւր ձեռքը:

Օգոստոսի 1-ին գաղթականութեան առաջին հոսանքն
արդէն հասել էր Իզդիր, մի քանի հազար հոգով: Ճանա-
պարհին նոցա առժամանակեայ օգնութեան էր հասել
Մոսկուայի Յանձնաժողովը և Քաղաքների Միութիւնը՝
Կըզըլ-Դիզա, Չընկիլ, Օրգով և Իզդիր սննդատու և թէյ
մատակարարող կայաններ հաստատելով:

Օգոստոսի 2-ին գաղթականների առաջին հոսանքը
հասաւ Էջմիածնին, մօտ 2000 հոգով, որոնց համար կա-

բևոր էր շուտափոյթ օգնութեան հասնել և գործը կազմակերպել:

Նախորդ երեկոյեան եղբ. Օգն. Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովն արտակարգ նիստ ունեցաւ, ուր մասնակցում էին Էջմիածնի տեղական Յանձնաժողովի, Երեւանի եղբ. Օգն. ճիւղի բոլոր անդամները, Մսոկուայի Յանձնախումբն՝ իւր ներկայացուցչով, Քաղաքների Միութիւնը, տեղական բժշկական և առողջապահիկ խմբերը, որպէսզի անմիջական օգնութեան գործը շուտափոյթ և ըստ կարելւոյն ցանկաւի եղանակով կազմակերպուի:

Որոշուեցաւ ա) գլխաւոր կայաններ համարել Էջմիածինը, Երեւանը և Իգդիրը և այնտեղ ամենայն տեսակի,— սննդատու, թէյի, հացի, բժշկական, առողջապահիկ և այլ կայաններ ունենալ բոլոր կարևոր միջոցներով, բ) հաստատել Մարգարա գիւղում բժշկական—Ֆելդշերական և սննդատու կայան, գ) Բայազէտից սկսած մինչև Իգդիր որոշել վայրեր, ուր և հաստատել նոյնպիսի կայաններ, դ) ամէն միջոց ձեռք առնել ալիւր և շաքար հասցնելու, ե) որոշել այն վայրերն, ուր նորեկ գաղթականութիւնը պիտի տեղաւորուի, զ) խնդրել տեղական դաւառապետի աջակցութիւնը գաղթականներին կանոնաւոր խմբերով հասցնել տալ իրենց նոր գաղթավայրերը, է) յայտնի լինելով որ նահանգական իշխանութիւնն առ այժմ եկողներին պիտի տեղաւորէ Ապարանի շրջանում և Աղէքսանդրօպոլի դաւառում, սահմանել սննդատու, թէյ մատակարարող և բշկական կայաններ Աշտարակ և Ալիքուչակ գիւղերում և ը) ի նկատի ունենալով, որ կազմակերպութեան գործը պէտք է արագ և լրիւ կազմակերպել՝ որոշուեցաւ եղբ. Օգն. Գլխ. Կարգադիր Յանձնաժողովի նախագահ Տ. Գէորգ վարդապետին խնդրել Իգդիր անցնել և իւր անմիջական հսկողութեամբ գործը ղեկավարել:

Օգոստոսի 3-ին Տ. Գէորգ վարդապետը գնաց Իգդիր, ուր անմիջապէս գործի ձեռնարկելով կազմակերպեց օգնութեան գործը:

Նոյն օրը ժողովի հրաւիրուած Եղբ. Օգն. Յանձնա-
 ժողովի տեղական կազմի, Քաղաքների Միութեան, Մու-
 կուայի Յանձնախումբի, Ամերիկայի ներկ. պատուելի Ֆ.
 Մըկ. Ալլումի, Վերաշինութեան Յանձնաժողովի ներկայա-
 ցուցչի, Գիւղատնտեսական Ընկերութեան լիազօր Ա. Սա-
 հակեանի, գաղթականութեան ներկայացուցիչների խառն
 ժողովում որոշուեցան ա) այն վայրերը ուր պէտք է հաս-
 տատուեն սննդատու և բժշկական կայաններ Բայազէ-
 տից եկող գաղթականներին խնամք և հոգածութիւն ու-
 նենալու համար, բ) դիմել գաղթականական գործի գլխաւոր
 ղեկավար գեներալ Թամամշեանին ալիւր և շաքար հասց-
 նելու Իգդիր, գ) առայժմ գաղթականներին պահպանել
 ըստ հնարաւորութեան Սուրմալուի գաւառում, դ) հաս-
 տատել մի պահակախումբ Երասխի կամրջի վերայ Սուր-
 մալուից ելնող գաղթականութեան հոսանքը որոշ և ցան-
 կալի ուղութիւն ստանալ տալու համար, ե) հաստա-
 տել Իգդիրում մի քանի մեծ փուռ՝ բաւականաչափ հաց
 պատրաստել տալու համար, զ) հրաւիրել ի մասնակցու-
 թիւն գործին Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութեան,
 որ իւր շտեմարաններն ունի Իգդիր և Էջմիածին, ևն ևն:

Գործը կազմակերպելով Տ. Գէորգ վարդապետը դար-
 ձաւ Մ. Աթոռ Օգոստոսի 7-ին

* *
 *

Օգոստ. 4-ին գաղթականութեան հոսանքն այնքան
 մեծ ծաւալ ստացաւ, որ Էջմիածնում արդէն հաշուում
 էր մօտ 20 հազար հոգի:

Այդքանին կերակրելու, սնունդ տալու, հաց մատա-
 կարարելու, դիշերը պատսպարելու, բժշկական օգնութիւն
 տալու՝ ծանր, բազմակարօտ գործը ամենայն թիրով կատա-
 րում էր Մ. Աթոռի միաբանական ուխտը, իւր նախկին

անդամների և գործակցութեան հրաւիրուած նոր անդամների հետ: Հաց, բնակարան և զիշերելու վայր հայթայթելու, անասուններին պահպանելու հոգածութիւնը, որ այս անգամ մեծ քանակութեամբ բերել էին իրենց հետ, յանձն առաւ Եղբ. Օգնութիւնը, կերակուր մատակարարելու գործը Քաղաքների Միութիւնը, իւր եռանդուն ներկայացուցչի, բժ. Մանդինեանի ձեռքով:

* * *

Օգոստ. 4-5-ից սկսած գաղթականների հոսանքը Եղբ. Օգն. Յանձնաժողովի ջանքերով ուղղուեցաւ դէպի Արաբատեան դաշտի լեռնոտ լանջերը՝ Ապարան, կանխօրէն գնացողների ընտանիքների բոլոր անդամների և նոյն իսկ նոցա անասունների, մանրամասն ցուցակը պատրաստելով:

Գնացողներին տրուում էր հացի պաշար, մի-մի կուժ, ճանապարհին առուներից ջուր չխմելու և չհիւանդանալու համար, պահակներ, որ պիտի հասցնէին մօտաւոր կայանը, ուր նոցա սնունդ՝ կերակուր և թէյ էր տրուում և ապա հետեւալ կայանն ուղարկուում, իսկ հիւանդներին և ուժասպառներին տրուում էին սայլեր:

* * *

Իգդիրի Եղբ. Օգն. Յանձնաժողովի ներկայացուցիչ Ս. Մատինեանի դէմ հեռագրական դիմումն լինելով Հայրապետական Դիւանին, խնդրել էին քննիչ Յանձնաժողով նշանակել՝ քննելու այնտեղի գործերը և յատկապէս Ս. Մատինեանի նկատմամբ եղած զեղծումների խնդիրները:

Վեհ. Հայրապետը քննութեան գործը կատարելու գործառնութիւնը յանձնեց Եղբ. Օգն. Գլխ. Կարգադիր Յանձնաժողովին, որ իւր օգոստ. 1-ի նիստի մէջ որոշեց գործի ամբողջ քննութիւնը, ինչպէս և Ս. Մատինեանի դէմ եղած ամբաստանութիւնների պարզելը, յանձնել մի յատուկ մարմնի, որի մէջ մտնում են Եղբ. Օգն. Գլխ. Կարգադիր Յանձնաժողովի անդամներ, Տ. Գիւտ արեղայ

և Գ. Կանդուրաւեան, Ս. Էջմիածնի աեղ. Յանձնաժողովի հաշուապահը և երգուեալ հաւատարմատար Լևոն Մուշեղեան:

Քննիչ Յանձնաժողովը, պարագաների բերմամբ կարողացաւ միմիայն օգոստ. 21-ին ելնել Իգդիր քննելու այդ գործը, որ դեռ ևս շարունակուում է:

* * *

Մշի և Սասունի կողմերից հասնող նոր գաղթականները, թուով 10—12 հազար, հասած լինելով Կաղզուանի վերայով Կողբ, կարեւոր էր նոցա տեղաւորելու խնդիրը լուծել:

Առանձին ժողովի առարկայ լինելով այդ խնդիրը, օգոստ. 17-ին, որոշուեցաւ գաղթականական հոսանքն ուղղել դէպի Արաքս կայարանը, և այնտեղից մի մասը Արաքս—Թալին—Մաստարա—Շիրաղալայի վերայով փոխադրել Աղէքսանդրօպօլի գաւառը, իսկ միւս մասը Արաքս—Թալիշ—Կօշ աւանի վերայով անցնել տալով տեղաւորել Ապարանի և Արագածի փեշերի վերայ ընկած հայ գիւղերում, ի նկատի ունենալով լեռնային այդ ժողովրդի կլիմայական պայմանները, որ աւելի համապատասխանում է այդ շրջաններին:

Այդ բոլոր վայրերում որոշուեցաւ ունենալ անհաւառ կայաններ, ուր անցնողները կստանան կերակուր, թէյ և հաց: Ի նկատի ունենալով նոցա յոգնածութիւնը դիւրութիւն տրուեցաւ նոցա ընտանիքներին ու փոքրիկներին, ինչպէս և հիւանդներին՝ փոխադրելու կառքերով, որի համար վարձուեցաւ 15 ֆուրգօն: Հացը, ամենայն օր, ուղարկուում էր, թխած և պատրաստի, Ս. Էջմիածնից, օրական 100—150 փութ: Իսկ ընդհանուր գաղթականութեան պէտքերի համար Ս. Էջմիածնի Յանդնաժողովը մատակարարում էր օրական 4—500 փութ հաց:

* * *

Օգոստ. 23-ին Մ. Աթոռ ժամանեց Տփլիսից մեծ Սամսոն Յարութիւնեան, որին ն. Վեհափառութիւնը հաճեցաւ առանձին ունկնդրութիւն շնորհել:

Պ. Յարութիւնեան կարճ ժամանակով մնալով Մ. Աթոռ, նոյն օրը մեկնեց Իգդիր:

✱ ✱
✱

Մ. Աթոռի մատենադարանապետ Գեր. Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը գրաւոր հրաժարական ներկայացնելով խնդրել էր ն. Սրբութեան հաճութիւնն, իրեն ազատ համարել վարած այդ պաշտօնից, բաւ համարելով իւր եռամեայ պաշտօնավարութիւնը:

Վեհ. Հայրապետն ընդունելով այդ հրաժարականը, նոր մատենադարանապետ նշանակեց Սինօղի անդամ Տ. Դէորդ վարդապետին, օգոստ. 24-ից:

Տ. ծ. վ.